de la Revue Arménienne HANTES
en Couvent des R. R. P. M
à
VII Méchithe

ՄԱՄՈՒԼ

ԿՐՕՆԱՒՈՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

29ՐԴ ՏԱՐԻ

1899

ԹԻՒ 16 ՕԳՈՍՏՈՍ 15

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԻՋՄԻՐ

ՏՊԱԳՐ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻ 649
ՖԷՆԷԼԱՑԻ ՀԱԿԱԶԱԴԻՐԸ 654
ՈՂՔ ՈՐԴԵԿՈՐՈՅՍ ՄՕՐ (երուսաղէմ Յ. Գազազեան) . . 662
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԱՇՈՒԽ ԿՈՅՐ ՄԵՍՐՈՊԸ (Գ. Տ. Մեսրոպեան) 664
ԲՆՈՒԹԵԱՆ ԾՈՅՆԻՆ ՄԷՋ (Ս. Մակարեան) 667
ՎԱՀԷՆ ՈՒՐ Է (Արսեն) 669
ԹԷ՞ ԻՆՉՊԷՍ ՔՆԱՆԱԼՈՒ Է (Տ. Գ. Թաշճեան) . . 670
ՊԱՏԺԱՊԱՐՏ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ 672
ՆԱՒԱՅԻՆ ՋՕՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՏԻՐՈՒԹԵԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ (Տ. Գ.) 675
ԿԻՒՐՆԻ ՈՐԲԱՆՈՅԻ ԽՆԴԻՐ (Դիտող) 678
ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 681
ՔԱՂԱՔԱԿԱՆ 686
ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ (Լ. Պալեօզեան — Յ—ԼՂ—Ժ Ա. Մ—ՀՂ) . . . 689

Ա

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԼԷԴ

Թարգմ. Գ. Յ. ԲԱՐԱՆՃԵԱՆ

Վիեննա Մխիթարեան Տպարան 1899

Շէֆֆըլէի պաստէտով

Գինն 10 դրշ.

ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ

ԿԱՄԱԿԱՐՈՒԹԵԱՆ, ԲՆԱԿԱՐՈՒԹԵԱՆ

եւ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ի ՊԻՏՈՒ ԶՈՓԱՒԱՑԻՑ

ԳՐԵՑ

ՏՕԿԹ. Ե. ՏԱՂԱՒԱՐԹԵԱՆ

Կ. Պոլիս Տպագր. Մատթէոսեան 1899

Գինն 6 դրուշ

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ե. ՏԻՒԶԵՆՃԵԱՆ

Տպագր. Ն. Կ. Պէրպէրեան 1898 Կ. Պոլիս

Գինն 27 դրուշ

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՁՈՒԱՆՍ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Բ. Տուէ

Բարձրագոյն դասընթացից առաջ. Նախակրթարանները

Բ. Տպաքրքրութ.

Յօրինեց Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

Կ. Պոլիս տպագր. Յ. Մատթէոսեան 1899

Գինն 6 դրուշ

174 ՏԵՐ
ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ

ՄԱՍՆԱՒՈՐ ՇԱՀՈՂ ԹԻՒ
300000 Ֆրանկ

Արեւելեան Բումէլիի երկաթուղեայ 173 տե· վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունվար 20 — փետրուար 1 ին, Արքունի փողերանոցի մէջ։

Սոյն վիճակահանութեան Օսմանեան դրամատան բաժանէաներն կ՚վաճառուին իմիջ, բաստաժ Չօնիչէտա, թիւ 12 Տիար Օ· Սլատրսի գրասենեակը միայն։

Գին մի ամբողջ բաժանի 3 ½ դահեկան ոսկի։

Շահող բաժանէաներն ներկայացնողն, պիտի ստանայ մայր տոմսն, որով պիտի կարենայ շահած գումարն գանձել Օսմանեան դրամատունէն։ 20—24

Յ· ԳԱՐԱԳԱՇԱՆ և Վ· ՋՄԻՒՌՆԱԿԵՍԵԱՆ

ԹԱՄԱԳՈՐԾՔ

Պատիւ ունինք ծանուցանել Արդոյ Հասարակութեան թէ ի Զուհա Պէտէթէն թիւ 14 մեր նոր բացած վաճառատան մէջ կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ժամացոյցներ· ոսկիէ, արծաթէ, նիքէլ, սև oxidé, զարնող ամսաթուոյց և քրօնօմէթրը պրպանի ժամացոյցներ։

Զարմուցիչ, պատի և դպրոցի մեծ ժամացոյցներ (pendules)։

Զանազան տեսակ գոհարեղէններ, ինչպէս ապարանջան, քարֆիցա եւն։

Ժամագործներու և ոսկերչաց վերաբերեալ ամէն տեսակ գանազան գործիներ։

Ընդ կը յարդարուին ամէն տեսակ ժամացոյցներ իրապէս երաշխաւորեալ։

Ժամացոյցներու վաճառումն և յարդարումն արտակարգ զեղչեալ գիներով կ՚ընեն։ 15—24

ԴԵՐԶԱԿԱՏՈՒՆ

ԳԷՈՐԳ Մ. ՔԷՉԻՉԵԱՆ

Ապահովճոռանոց Ներուժեան ֆէրմանէին կից, թիւ 1

Վաճառատունս հաստատուած օրէն ի վեր սուղ ժամանակի մէջ ունեցած բազմաթիւ յաձախորդներս, ապացոյց մի են թէ՛ մենք մեր յայտարարութեան հաւատարիմ գտնուած ենք, հարկ չկայ գովեստներ շռայլել։ յայտ, մեր գործերը վկայ են որքէն՝ թէ դներու ժանութեան հետ նաև ունինք մեծ առաւելութիւն մը ուրիշ նմանօրինակ հաստատութիւններէ ձեւի, կարի և ապրանքի մասին։ Երեակայեցէք թէ՝ որչափ դժուարին է մեզ մէկ անհատի ճաշակը գոհացնել և ձեին յարմարութիւն տալ, նա մանաւանդ երբ այդ անձը առաջին անգամ է որ հագուստ չինել կուտայ մեզ։ Ուստի ինչպէս մինչև այսօր, նոյնպէս ալ այսուհետև պիտի աշխատինք մեծ չանք և զոհողութիւն չի խնայել նոյն իսկ մեզի բծախնդիրները անգամ գոհացընելու։

Աւելորդ չենք համարիր։ նաև իմացընել թէ վաճառատանս մէջ կը գտնուի քազմիրներու, փաւօներու և այլ տեսակ աուէզպէններու ճոխ հաւաքածոյ մի, և թէ պատրաստ կարուած հագուստներ ալ ունինք։

Ամաճ, ձեռաւոր եւ տոկուն, դիմեցէք եւ տեսէք։ 22—24

ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հայոց գլխ. քաղ.

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Պատիւ ունինք ծանուցանել Սրգոյ Հաստարակութեան և մանաւանդ ամբ մեր պատ. Յաձախորդներուն թէ վերջերս մեր վաճառատունը խոտ ճոխացուցած ենք զանազան ու նոր եռանկերով։

Մեզ գիմողը ամէն ինչ պիտի գտնէ շատ ժամն գին էրով։

Ունինք նաև Ալբիարի և ուրիշներու ընտիր օճառներ, նոյն գործատուններէն ծախուած գիներու վրայ ԱՌԱՆՑ ամենամեծ յատկապրութիւն մ՚ընելու։

Դիւրութեան համար մեր յաձախորդներուն հաշուեհամարներ կը յանձնենք և մեր սովորութեան համեմատ հաշիւները ամիսը անգամ մը կը փակենք։

ԱՆՀԱՄԵՄԱՏ ԱԺՆՈՒԹԻՒՆ 16—24

ԵՋԱԿԱՆ ԱՌԻԹ

Թէ՛ մեծ հմտութեան և թէ՛ բարի վարք ու բարքին համար ամենաբարձր կարգի վկայականներ ունեցող ազգային մը պատրաստ է ամեն ատեն ծառայելու իր թուրքերէն, հայերէն, գաղղիերէն և գերմաներէն լեզուաց՝ գրագրութեան և տոմարակալութեան պաշտօն վարելու, ֆազաքս նոր եկած ըլլալուն համար շատ շահաւոր առաջարկութիւններ ընելու մեծ զոհողութիւնը ունի, փարձեցէք մէկ քանի ամիս և եթէ ձեր խղճմտանքը չի վկայէ ձեզ թէ «մէկ լեզուի գիտնն անգամ պակաս գնով չէրս լեզուի գրագիր ունեցած չէի, այսչափ հմտութ և հաւատարիմ ըլլալով հանդերձ... եթէ իրականացած չի համարիք այս ճշմարտութիւնը, նա պիտի մեկնի ձեր գործէն իր առաջարկը տատնձելով։

Աւտիկ անմրցելի երաշխիք, անհուն ինքնավստահութեան արդիւնք, աւտիկ լաւ տեղ լաւագոյն գրագիր կամ գաստուրնենալ ուզողներուն, սիրտը և քաջկը գոհացնելու եզական տեսիլ։ Ապահովագրուած առաւելութիւն և մխիթարական ապահովութիւն։

Ինչ պատրաստ է նաև ասեներու և դպրոցներու մէջ յիշեալ ջոջս լեզուներէն զատ քարտ մաթեմատիքի, բնական գիտութեանց և կրկնատոմարի դասեր տալ և գերմանական գերազանց մեթոտով մը բժշկութեան կամ դեղագործութեան ատ. ի 2–3 տարիներու պիտանի ատոմներ աւանդել։ Դիւրամատչելի պայմաններ և յառաջդիմութիւնը ապահովելու գրամական երաշխիք։ Գիտել ի Մամուրեան տպարան։

Խ. Գ.

4 – 4

ՀԱՅԳ Ի ՋՄԻՒՌՆԻԱ ԵՒ Ի ՇՐՋԱԿԱՅՔ

ՀԱՏՈՐ

ԳՐԵԳ ՏԵՐ ՑԱՊՈՒՐ ՎՐ. ՓՕՍԵՒԵԱՆ

68 Պոուվէրով

Ազնիւ Միւիր. Տպարան 1899

Գին 2 հատորին 30 դրուշ

ԿԻՍԱՄԱՆԱՅ

ԹՎ. ՏԱՐԻ

ԹԻՒ 16 15 ՕԳՈՍՏՈՍ 1899

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻ*

Բայց այսպէս կաշխատուած չպիտի միայն քնատպատումեան ոգին, իր կապերը պիտի քակէր և ամեն բնական ու ընկերային իրերու վրայ թէ հիմնաւոր և թէ անհիմն վճիռներ պիտի արձակէր, քանի որ իմացականութեան, գիտութեան և հայեցողութեան զօրութիւնն, հակառակ ամեն սպիտակեան ու կառավարական գիմադրութեանց, նոր ճշմարիտ մը պիտի ստանար:

Եւ սակայն՝ հին ու նոր դարերու յաւատարմութեան և դիմառութեան նշոյլներն, այլ և այլ ազգերու մէջ, այդ քնատեղրատկան չկատարներու հետևանքն եղած են և են, թէև, արդէն ընդհանուր

* Տե՛ս, թիւ 15 երես 610:

քանի՛ քանի ծանր զոհողութեանց և արիւնալի վէճերու գնով ընկերական մի անհրաժեշտ պիտոյքի կարգն անցած է այժմ այդ քննադատական ոգին։ Ուզիլ կամ մնալ, այդ ոգին քիչ շատ զարգացած իմացականութեան մի յատկանիշն է, յառաջդիմութեան մղիչ ոյժն է, և միօրինակութեան ու ձևապաշտութեան անհաշտ թշնամին։ Աչքէ անցուր պատմութիւնը, պիտի տեսնես, ինչպէս բարբարիկ ցոյնպէս բարեկիրթ ժողովուրդներու մէջ, եթէ կարելի է ըսել, նախասահմանեալ հոգիներ որ պայմանադրական ու սովորական շաւիղներէ դուրս երթելով՝ յանդգնած են և դեռ կ՚յանդգնին խորհելու ու գտնելու նոր բազոյն մնծոտներ հնարել և մարդկութեան առջև նոր հորիզոններ բանալ։

Եւ զարմանալի չէ, եթէ իրեւ յաւիտենական ճշմարտութիւններ քարոզուած գրութեանց դէմ անգամ քննադատութեան ոգին, որ շլացիներու և կուսակցական վարձկաններու համար թշնամութեան կամ հեռութեան չար ոգի մ՚է, կ՚ընդվզի և ամեն ինչ խնդրոյ ու կասկածի ներքև կ՚ձգէ։ Այնպէս կ՚ըսուի որ քննադատութիւնն խմացականութեան մի թագուն յատկանիշն է որ երևան կ՚ելնէ նախ առարկայական և ապա ենթակայական նորանշան ապաւորութեանց շնորհիւ։ Եւ ատոր ծագումն առած է փիլիքական ու բարոյական երևոյթներու ուսումնասիրութիւնը։ Զարմանալի է նաև որ գարերէ ի վեր գանազան քննադատութեանց ներգործութիւնը թէ կրօնական, թէ ընկերային, թէ գրական, թէ գիտական և այլ խնդիրներու վրայ չէ հասած այն աստիճանին որ ատէ, սրբէ ու տանի մարդկութեան, նոյն իսկ լուսաւոր կեդրոններէ, այն սուտուպատիր և մնլար գաղափարներն ու հիմնարկութիւնները որոյ դեռ ևս կ՚վարին մի շատ մարդկային խումբեր։ Պատճա՞ռ, վասն զի նախ՝ մարդիկ չեն կարող շուտով մերկանալ իրենց սիրած գրութիւններու և շահերու ցանցէն, որ իրենց բնութեան հետ շաղուած են, երկրորդ՝ ինչպէս ուղիղ և անուղիղ, նոյնպէս յարաբերական ու բացարձակ քննադատութեան ոգի կայ։ Եւ

քննադատութեան ոգին անելիս է, երբ դիտաւորեալ կամ անգիտօրէն քննադատելի բան մը տարբեր դոյներով կ'ներկայացուի, և անհիմն եղրակացութեան մը հասնելով՝ ճշմարտութենէ ի սպառ կ'հեռանայ։ Երբ դիտաւորեալ կ'մեղանչէ հակառակասիրութեան կամ չարմտութեան թելադրութենանց կ'հետևի, և սակայն բուն խնդիրը Թողլով անձնական ծանր ու անշահ ակնարկութեանց մէջ կ'պտրտի, բան մ'որ միայն փոքրոգի և նախանձոտ գրողներու յատուկ է։ Երբ անգիտօրէն կ'պատահարաբար քննադատու ինչ որ ուղիղ է, արդար է, իր անկեղծութեան համար կ'ներուի, այլ ոչ դատած խնդիրներու մասին ունեցած անգիտութեան համար։ Իսկ յարաբերական է քննադատութեան ոգին երբ ընդունուած կանոններ ու գրութիւններ իրեւ բաղդատութեան կէտեր նկատելով, լաւագոյնն ի նպատա եղրակացութիւններ կ'հանէ, առանց քննադատելի երկին խորը, այս է ծագումն ու ազդեցութիւնը հիմնովին քննելու և ըստ կարի ճշմարտութեան մօտենալու, առ ոչ ինչ գրելով ընկալելագաղափարներ ու համոզումներ։ Եւ քննադատութեան այս ուղղութիւնը պարզապէս շրջահայեցութեամբ ուղղակի հատատեալ նախապաշարումներու և սովորութիւններու դէմ չը բախելու զգուշութիւնն է։ Բայց եթէ ըստ ցարմանակ ինանատատական ոգի վնասէնք, նոյն իսկ լուսամիտ ժողովուրդներու մէջ, հազիւ ուրեմն գիտութեան մի քանի ճիւղերու նկատմամբ այդ ոգին կ'տեսնենք, մինչդեռ բարոյական, ընկերային, ազնտեսական, վարչային, օրէնսդրական և այլ խնդիրներու մասին սովորաբար զգուշաւոր ուղղութեան մը կ'հանդիպի։

Աբդարև, կրօնական, խմաստասիրական, երաւագիտական և ընկերբրանական հին սահմաններու մէջ արշաւելով՝ քննադատութեան ոգին մի շատ սկզբունքներ ալեց սրբեց և ճշմարտութեան ճառագայթներ արձակեց մութ, անխմանալի և խորհրդաւոր տեսութեանց ու վարդապետութեանց վրայ, տեղ տեղ մարդկային հնաւանդ սիրական հաւատալիքը քարուքանդ լինելով և դարաւոր ստութեանց արժէքը ցոյց տալով, սակայն

այլ ազին, որ բազմակոչմանի գիտական և պատմական հրա-
պարականց վրայ հիմնուած, նոր գիտութեան մը կարգն անցած
է, չկրցաւ ցարդ խափան իր տիրապետութիւնը հաստատել և
բնակչիչ ընել այլ և այլ մարդկային խումբերու մէջ արմատ
բռնած և բնական իրերու կարգն անցած կարգ մը պայմանապրական
և պաշտօնական անհեթեթութիւններ և այլանդակ աւանդու-
թիւններ որ այսօր ընդհանրապէս մարդկային մեծագոյն մասին
ազէտից և թշուառութեանց պատրուակներն են։

Գ

Եթէ այսպէս շուտափոյթ և բարեկիրթ կարծուած ազգերու
մէջ, հապա ի՞նչ խոցհելու է այն ժողովուրդներու վրայ որ՝
քննդհանրապէս արևելեան հին դրութեանց վազուց ենթակայ՝
հոգւով մարմնով նախապաշարմանց ոլիկեանու մէջ կ'լողան, այդ
չիճակին իրեն նախասահմանեալ անբան էակներ, և ոչ իսկ
կ'կասկածին որ իրենց ապրած կեանքէն տարբեր կեանք մը կրնայ
գոյութիւն ունենալ։ Իսկ մեր ազգին գալով՝ քննադատութիւնը
ներքողական և իրերդուքական սահմանէն եղած, շատ ու շատ
զգուշաւոր և հաշտարար գրութեան մը կ'հետևի օրական
հին գաղափարներու, հին գրութեան յարած մարքեր չգայրացը-
նէ, որ պատրաստ են նախանձէ, առելութենէ և մինչև իսկ
անիրաւութենէ յառաջ եկած չարախօսութիւն կամ գրպարտու-
թիւն հասնելէ քննադատի մը ամենէ անկեղծ և ուղիղ գա-
ղտղութիւնները։ Եւ առ հասարակ այս կարծիքն ունին անոնք
որ օրինաւորութենէ ու արդարութենէ շեղիլ, կանոնազանցու-
թիւնէ շարժիլ թէ ընկերային և թէ տնտեսային շրջաններու
մէջ, իրեն անպատասխանատու արարածներ, իրենց պարծանք
կ'համարին և ոյլոց ևս պարտազանցութեան օրինակ հանդի-
սանալով օր րան օրէ ժողովուրդն շղոտմարարութեան և ան-
կանոնութեան կ'վարժեցնեն մի միայն անոր համարանն այլ
կեղծապատիր և ազգանէաս ձևերով շահելու համար։ Եւ ժո-
ղովուրդ մը տակայն պարտի իր ամենէ հատուածով և բարե-

սէր բարեկամը նկատէ այն անձն որ ուղիղ և անաչառ քննութեան, և չէ թէ գձուձ կուսակցութեան և շահամոլ բռնախնդրութեան ոգւով կ'նշանակէ իր թերութիւնները, կը քննէ իր ընթացքը, պաշտօնական և ընկերական մարմիններու մէջ տիրած պատասխանատուութիւնները և զեղծմունքը երևան կը հանէ, և ի վերջ՝ ինչ որ ուղիղ, արդար և տոհմային պատուոյն ու շահերուն նպաստաւոր է, հրապարակաւ մատնանիշ կ'ընէ։ Պէտք չէ ուրանալ սակայն որ կայ նաև կերպ մը քննադատութիւն որ պարզապէս անուարկութիւն է, շարժառիթը անձնական թշնամութիւն և հետևանքը յոռի բանակռիւ և կարծեաց պղտորութիւն։ Ա.յսպիսի անշահ քննադատութեան օրինակները անպակաս էին երբեմն, և այժմ ևս մերթ ընդ մերթ կ'երևին օրագրական հրապարակին վրայ, քննադատութիւն զոր պէտք չէ շփոթել ճշմարտութեան հասնելու համար եղած հարցաւիրական փորձերու և արդարացի դիտողութեանց։ Ա.յսպիսի արդար և իրաւասէր քննադատութեամբ է որ հանրային գործերն կանոնաւոր ուղղութիւն մը կ'առնուն, պաշտօնական մարմինները պատասխանատուութեան պիտակցութեամբ կ'գործեն, զբաղան ասպարէզէն անհեթեթ գրուածներ և անմիտ գրչակներ հետզհետէ կ'անհետին և վերջապէս հասարակութեան դատողութիւնը կ'սրի, կ'լուսաւորուի, ընտրերը վտանէն զանազանելու կարողութիւնը կ'աւելնայ և ճշմարիտը օր ըստ օրէ կ'մշակուի։

(10)

ՖԷՆԷԼՈՆԻ ՀԱԿԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ը.

ԼՈՐԴ ԳԱՍԼԴԸՆ Կ'ԱՌԱՋԱՏՈՒԻ

Գրոսվ ՊՐՈՔ ՍՊՕՓԸ

Լորտ Ֆրէնսիս Օնզլը բարևեց իր գլխարկը հանելով։ Բնազդով մ'ըրաւ այս չարժուծքն, վասն զի պէտ առ դէմ կ'դանուէր կնկան մը, միայն կիսովին չըմորած կ'երևէր այս անակնկալ հանդիպումէն և չէր կարող գաղափարներն ամփոփել։ Այս միայն կ'իմէր որ երբ վերջին անգամ իր կինը տեսած էր, նէ իր սենեկին դուռը Պ. Մրկըրի առջև կ'բանար։ Իր դէմքը մխիթար դարձաւ, այնքան որ Ֆէնէլա կարծեց թէ մահուան գեղնութիւնն էր այն։ Նէ գիտէր որ անցած գարցածին մէջ աստիճան մ'ինք յանցապարտ էր . . . թէ իր նախորդ ընթացքին հետեւանքն էր պատահած սպանութիւնը։ գիտէր նաև որ ամուսինն անտեղեակ էր թէ ինչ բաժին ունէր այս գործին մէջ, և իր մասնական յանցաւորութեան գիտակցութիւնը կ'մեղմէր մարդասպանին համար ղգացած սոսկումը։ Նոյնպէս գատն՝ որ բու ենթակայ գտնուած էր այդ հպարտ և գայլուն կինն, ամբաստած էր իր սիրան, ուր յոյսը կը վերածնէր։ Ֆրէնքի տեսքը . . . իր վախտ սյտերն՝ կրած տառապանքին յայտարար, և դէմքին մահատիպ դնդնութիւնն, զարհուրելին ամեն համակրական զգացմունք որ կնկան մը սիրոյն մի մասն է։

Ֆէնէլա իր ձայնին մէջ բոլոր հոգին դնելով է որ նորէն ըսաւ — Ֆրէնք։

Ֆրէնքի ձայնը խիստ էր և տխուր երբ պատասխանեց իր կնկան, — Ի՞նչ կայ։

Ֆէնէլա ցուրտ սարսուռ մը զգաց բայց չարաւնակեց։

— Ֆրէնք, խօսք մը միայն կուզեմ ըսել քեզ . . . այո՛, պէտք է որ ըսեմ։ Աստուածդ սիրոյն, Ռոնիի սիրոյն, մի մերժեր խնդիրս։

Ֆէնէլա չդիտէր տակաւին որ Ֆրէնք Մրկըրի մահուան ան-

տեղեակ էր, և երբ նա պատասխան տուաւ, այդ պատասխանն աւելի խիստ թուեցաւ քան ինչ որ կ'մտադրէր։

— Մինչ կ'փափաքիս այն գիշերուան վրայ խօսիլ ինձ, Մեղմ ձայնով մը պատասխանեց Ֆէնէլա.

— Այո՛, — Ապա անոր աչքը մէջ նայելով և դիտելով որ դաժան նայուածքն աւելի դաժան կը դառնայ, վասն դի մարդ մը քիչ անգամ վհատանձն ընթացք մը կ'ունենայ կնկան մը հետ՝ երբ իր պատիւն արատած կ'նկատէ — նէ յարեց. —

— Ա՜հ, Տէր Աստուած, Ֆրէ՞նք, Մինչ կարծես թէ յանցապա՞րտ եմ։ Ո՛չ, ոչ, ոե պէտք չէ որ այդ կասկածն ունենաս։ Զաւիէն աւելի անգթութիւն մը պիտի լինէր քու կողմէն։

Ֆրէնք Օնզլօ կայ առաւ և ըսաւ.

— Ֆէնէլա թո՛ղ ներէ ինձ Աստուած, բայց ես կարծեմ թէ յանցապարտ ես — և իր գլուխն անդին դարձուց։ Իր կինն քնապէս, մտածեց թէ Ֆրէնք ապանութեան կա՞կնարիկը և չէ թէ իր յանցանքին, ինչպէս որ տեսաւ, և մեղմիկ հեծեծելով գլուխը մէկդի դարձուց և դէմքը ձեռօքը ծածկեց։ Ապա ճիգ մ'ընելով վեր կեցաւ, բառ մ'անգամ չարտասանեց և ոչ չարժուեմ մ'ըրաւ իր անգիտակ անոր ներկայութեան, և վերջապէս ճամրան շարունակեց փողոցն ի վեր։

Ֆրէնք Օնզլօ մի քանի վայրկեան կեցաւ դիտելով իր կնոջ մեկնումը, ապա նամակատուփը առնող փողոցը բռնեց։ Դրան առջև կանգ առաւ զուարթ ձայն մը լսելով և կարկաւուն ձեռք մը տեսնելով.

— Օնզլօ։

— Գասլըըն։ Այս երկու մարդիկ իրարու ձեռք սեղմեցին ջերմագին։

— Կարծեմ թէ իմ հեռագիրս չստացած ես — ըսաւ լորտ Գասլըըն։ Հեռագրատան մէջ քեզ կ'սպասէ այն։

— Ի՞նչ հեռագիր։

— Այն հեռագիրն որով կ'իմացնէի քեզ թէ Լոնտոնէն ճամրայ ելած եմ, քու օգտիդ համար։ Մտածեցի որ աւելի ընդարձակ տեղեկութիւններ կ'ուզես . . . օրագիրներն որչափ անորոշ կերպով կ'գրեն։

— Ի՞նչ օրագիրներ, իմ չա՞հս և օգուտս, կ'ըսես։ Ձեմ իմանար։ բացատրէ միտքդ։ այս վերջին վեց չաբաթուան մէջ անցած գացածին վրայ բան մը չգիտեմ։» — Անորոշ, մեայլտա երկիւղ մը սկսաւ պաշարել իր միտքը։ Գասլըըն պատասխանեց

խիստ համակրելի ձայնով մը։

— Ներեցեք սեղեկութիւն չունիմ որ . . . բայց կեցիր։ երկար պատմութիւն մ'է, Եկու դառնանք գրօսանաւն։ Ես ալ հոն պիտի գնայի քեզ դտնելու համար։ Մինակ պիտի լինինք, և քեզ ամեն բան կրնամ պատմել։ Ահա քեզ համար հեռս բերած եմ օրագրեր։ — Եւ Գասլղըն ցոյց տուաւ թղթերու ծրար մը։

Երկու բարեկամներ միասին իջան նաւահանդիստը և նաւակով մը գրօսանաւը ելան։ Այս երկու մարդիկ բոլորովին առանձին կին։ Ապա Գասլղըն յստակ ձայնով մ'սկսաւ իր պատմութիւնը։

— Ֆրէնք Օնգլօ . . . լաւ ևս է որ իսկոյն վատագոյն լուրն իմանամ . . . երբ դու Հերօկէյդէն մեկնեցար քու կինդ մարդասպանութեան յանցանքով դատուեցաւ և անպարտ արձակուեցաւ։

— Ատուած իմ, ի՞նչ կ'ըսես։ Ֆէնէլա իր մարդասպան դատուի՞։ Որո՞ւ սպանութեան համար։

— Այն անգամ Մրկերի համար։ Կ'երևի թէ դիւերային Ֆէնէլայի սենեակը դնաց և բռնարարել ուզեց, այնպէս որ կինդ դաշունով զանի սպաննեց . . . ։

Գասլղըն զարմանահար մնաց, վասն զի խնդութեան նշոյլ մ'երևցաւ Ֆրէնք Օնգլօի դէմքին վրայ երբոր նա մրմնջեց։ — Փա՜ռք Ատուծոյ։

Ֆրէնք՝ Գասլղընի լուռթենէ ինքզինքին դալով, ըսաւ։

— Գտանառ մ ունիմ, սիրելի բարեկամ, և քեզ վերջն պիտի յայտնեմ զայն, բայց հիմակ դու չարունակէ խօսքդ։ Գտամէ ինձ բոլոր իրողութիւններն, կամ տուր ինձ օրագրերը կարդալու համար։ Ցիշէ միայն որ անցած գարձածին վրայ բնաւ բան մը պէտ չգիտեմ, և անհամբեր կ'սպասեմ իմանալուս։

Գասլղըն առանց բառ մ'արտասանելու օրագրերը տուաւ անոր, և նոր գլանիկ մը վառելով՝ կռնակը բարեկամին դարձած՝ նստաւ և մաքուր օդին ու արևուն վրդ սկսաւ քնանալ։

Ֆրէնք Օնգլօ ուշադիր կարդաց ծայրէ ի ծայր լրագրերն և կնոջ գատն։ Երբ աւարտեց ընթերցումն՝ թերթերը ծալած իր մեռքին վրդ և աղեպարեր դիւերուան սկսաւ՝ իր սկնարկներն սկսաւ ածել մոլորակին ասղնա անդին։ Քնածական թափին նորէն բռնած էր գինք։

Նոյն պահուն ոտք ելաւ և ծանրաքայլ իր մրափող բարե-

կամքին մօտեցաւ։ Ապա մրմռալով — ինչո՞ւ համար չպաննեցի զանի — զարկաւ ծալած թղթովը, իր մէջ դաշոյն մը լինէր, իր բարեկամը։ Գասլդըն, որ բաւական խոր քուն մը կ'քաշէր և իր գիրուկ դէմքին վրայ ժպիտ մը նկարուեր կր, այս ծանր հարուածէն սթափելով՝ բարկութեամբ պոռաց։ — Քշուառա՜կա՛ն։ — և ապա լուեց տեսնելով իր բարեկամին որ տեսակ մը նոպայով բռնուած կ'երևէր։ Ուստի սաստիկ կ'դեղնէր, քանի կը դիտէր որ Ֆրէնք Օնզլօ գինք կ'զարնէր ու կ'զարնէր իրր դա՜ունով։ Սուգիւ ծիծաղաշարժ բան մը կար այս գործին մէջ . . . մարդը կարծէր ստուգապէս թէ անձ մը կ'սպաննէ, մինչ՜ դեռ իր գէնքը պարզապէս ծալած թուղթ մ'էր։ Եւ Ֆրէնք քանի կ'գաչուներ կ'մրմռար։ — ինչո՞ւ համար զանի չսպաննե՜ցի։ — Ապա սկսաւ այլ և այլ ժուներ ընել, որպէս թէ երևա՜կայական դուռ մը կամացուկ մը կ'հրէր որ բանայ, և ապա իր աթոռը կ'դառնար և կ'նստէր ձեռներուն մէջ պահելով իր երեսը։

Գասլդըն հիացած կ'նայէր իր բարեկամին և կ'մրմնջէր։

— 'Խաղաւորները կարծիք յայտնած էին թէ Ֆրէնչայէ ա՜ւելի զօրաւոր մարդու մը ձեռքն ըրած պիտի լինէր սպաննուած մարդուն վզին նշանները։» Ապա իր չորս դին նայելով, դիտեց որ Ֆրէնքի չարժումներն ոչ ոք տեսած էր, և այս մասին գոհ լինելով՝ նորէն մրմռաց։

— Ազնի՛ւ կին մը, Աստուած վկա՛յ, ազնի՛ւ կին մը։ Ցետոյ Ֆրէնքին պոռաց։ — Ֆրէ՛նք . . . Ֆրէ՛նք Օնզլօ։ Լսիր, արթնցիր նայիմ։» Եւ Օնզլօ իր գլուխը վերցուց քունէ արթնցած մարդու մը պէս և ժպտաց ըսելով։

— Ի՞նչ կուզես բարեկամ։ Մի՞թէ քո՞ւն էի։» Պայանի էր որ քիչ մ'առաջ անցած դարձածը բնաւ չէր յիշեր։ Գասլդըն նլաւ ու գնաց անոր մօտ նստաւ, և իր բարի դէմքով ծանր երևոյթ մ'առաւ երբ հարցուց։

— Մի՞թէ լրագրերը կարդացի՛ր։

— Այո՛, կարդացի։

— Հիմակ ըսէ ինձ . . . ինչպէս խոստացար . . . ինչո՞ւ համար — փա՛ռք Աստուծոյ — ըսիր երբ խմացուցի քեզ թէ քուկինդ Պ. Մրկըրը սպաննած է։

Ֆրէնք Օնզլօ լուռ մնաց պահ մը։ Թէև դիմեր ցերեկ կ'յիշէր ինչ որ իրեն եղած նախատինք մը կ'համարէր, սակայն

խնդիրը կ'փոխուէր երբ այդ նախատինքի վրայ խօսիլ հարկ լինէր, մինչև անգամ Գասլղընի պէս բարեկամի մը։ Հիմակ անգամ, երբ արձակուած վճռէն այնպէս կ'երևէր թէ իր կինը սոսկալի կերպով իր պատուոյն վրէժը լուծեր էր, Ֆրէնքի ծանր կ'թուէր այդ նեղութին վրայ խօսիլ։ Գասլղընն դիտեց անոր մըտքին մէջ ծագած կասկածն ու պայքարը, և յիշօրէն ըսաւ, իր ձեռքը բարեկամին ուսին վրայ դնելով։

Ֆրէնք, մի վարանիր ինձ ըսելու ամեն բան։ Հետաքրքրութիւնը չէ որ կ'դրդէ զիս այս հարցումն ընելու — թէև կարծամէդ աւելի ընտիր մի բարեկամ եմ և կ'փափաքիմ աչքիս առջև երևցած կասկած մը փարատելու։ Յուսամ թէ գիտես որ բարեկամ մ'եմ։

— Այո՛, լաւագոյն բարեկամ մը զոր երբէք մարդ մը կարող է ունենալ — ըսաւ Ֆրէնք հառանդաղին, անոր ձեռքը բռնելով։ Ապա գլուխը մէկդի դարձուց և ըսաւ ժեղմիկ.

— Դու զարմացար, վասն զի դուն էիր որ Ֆէնէլա այն անգամը սպաննեց։ Ահա բացէ ի բաց քեզ կ'ըսեմ, Գասլղընն, ինչ որ ուրիշի մը չպիտի ըսեմ. պատճառն այս է որ այն անգամին՝ կնոջս սենեակը մտնելը տեսայ, և . . . Ո՛չ Աստուած մեղք չհամարի . . . այն ժամանակ կարծեցի թէ Ֆէնէլային փափաքն էր այդ։ Այս պատճառաւ Հէրօկէյդէն հեռացայ նոյն գիշերը։ Ինչպէս կարելի էր քաղաք իջնել և բարեկամներուս երեսը նայիլ իմ ստացած ծանր նախատինքէս ետքը։ Զգուսաւ նաւդ ինձ փոխ տալովդ է, սիրելի բարեկամ, որ կեանքս հանդուրժելի եկաւ։ Երբ Պիսդորեան ծովախորչին ամայութեան և Ատլանտեան խաղար կոհակներուն մէջ գտայ ինքզինքս առանձին՝ տպրելու փափաք մը ծնաւ սրտիս մէջ։ Այսպէս զբաղայ, և երբ լսեցի թէ կինս անպարտ է և թէ իր պատուոյն սպառնացող մարդը սպաննած է, միթէ զարմանալի՞ է եթէ ուրախութիւնս մեծ եղաւ։

Գասլղընն պահ մը լուռ մնալէ ետք հարցուց.

— Ի՞նչպէս կարող եղար հասկնալ այդ բանը, ինչո՞ւ համար չարիքը չարգիլեցիր։ Ներէ ինձ բարեկամ, բայց կը փափաքիմ վերահաստատ լինիլ։

Ֆրէնք Օնգլօ նաւուն եզրը դնաց և անոր վրայ կռթնեցաւ։ Երբ վերադարձաւ Գասլղընն դիտեց որ աչքերն արտասուալի են։ կարելի եղած զուարթութեամբ մը պատասխանեց.

— Նոյն գիշերն իսկ որոշած էի իմ կնոջս սէրը վերստին

գրաւել։ Նամակ մը գրեցի, նամակ մ՚որու մէջ թափեցի բոլոր հոգիս, և սենեկէս ելայ որպէս զի իր գրան առակը թողում որ առաւօտուն առնէ ու կարդայ, բայց . . . — Հոս կանգ առաւ և ապա մեղմօրէն չարունակեց — բայց երբ ներքազատիթն էի, տեսայ որ իր դուռը բաց էր, և նայն միջոցին Մրկոր երևցաւ։

— Միթէ Ֆէննէլա, զարմացած կ՚երևէր։

— Ա՛ա՛չ, ոչ, բայց քիչ մ՚ետք զարմացական ակնարկ մը նետելով չորս դին իր սեննեակը մտաւ և Մրկոր անոր ետևէն դնաց։ » Այս ըսելով գլուխը ձեռած մէջ առաւ և հեծեծեց։

— Եւ ապա՞ — յարեց իր բարեկամը։

— Եւ ապա, հազիւ գիտեմ թէ ի՛նչ պատահեցաւ, միտքս չիմի պուէթեան վրայ մտին յիշատակներով լի է, և զանազան փոթորկալի խորհուրդներ գլխիս մէջ կ՚պտուտքին։ Կարծեմ թէ քնացած պիտի լինիմ, վասն զի ժամն երկուք էր երբ Ֆէննէլա տեսայ, և հիմա կ՚հնչէր երբ պանդոկէն ելնելով կամրջէն կ՚անցնէի։

— Եւ նամակն. նամակն ի՞նչ եղաւ։

Ֆրէնք զարմանք յայտնեց. — նամա՞կը. բնաւ մտքէս չանցաւ։ Կեցի՛ր նայիմ։ կ՚երևի թէ սենեկիս սեղանին վրայ թողած եմ։ կ՚յիշեմ որ գայն հոն տեսայ մեկնելէս քիչ մ՚առաջ։

— Որո՞ւ հասցէին ուշադրած էր։ Մի կարծեր թէ հետաքրքիր եմ, միայն կ՚յուսամ որ այդ նամակը կրնայ մեծ կարևորութիւն մ՚ունենալ։

Ֆրէնք ժպտաց, բաւական տխուր ժպիտ մը, պատասխանելով. — Ֆէննէլայի տուած մտերմական անունովս գրուած էր հասցէն . . . այսինքն՝ Տիկին Ռայդ։ Սովոր էի հետն իմնալ վասն զի վէմի մէջ միշտ կ՚առարկէր և իր ըսածը պաշտպանել կը կրնար, այնպէս որ երբ զինք գրգռել ուզէի Տիկին Ռայդ (իրաւունք) կ՚անուանէի։

— Միթէ պանդոկի թղթի վրայ գրուա՞ծ էր։

— Ո՛չ, մտածեցի որ լաւ ևս էր գործածել այն թուղթն զոր մեր ամուսնութեան ժամանակ գործածեր էի . . . մի քանի թերթ մնացած էր գրասեղանիս մէջ, ուստի՝ հատ մ՚առի ու գրեցի։

— Կարծեմ թէ Սիւրէյ դաւառին մէկ կողմն նկարուած էր թղթին գլուխը, այնպէս չէ՞։

— Այո՛, Զիդինֆըրա, Հէզլմիրի մօտ։ Աղուոր վայր մ՚էր, նաև, կրկնեմ անուամբ, Ֆէննէլա այդ վայրը սիրեց և խնդրեց որ դնեմ, և գնեցի։

— Մինչ հոն մարդ կ'բնակի՞ հիմակ։

— Մարդու մը վարձու տրուած է։ Բայց անունը չդիտեմ, գործակալը գիտէ։ Երբ ընտանեկան չխոթուխնները հասան ինձ ըսի անոր որ այդ դիւղատունն ուզածին պէս վարձէ, և ձլուխս չցաւցնէ։ Ինչ ատենէն գործակալս գրեց ինձ հարցնելու համար թէ արդեօ՞ք օտարականի մը վարձու տալ զայն նեբելի է։ Գրեցի թէ սատանին ալ կրնայ տալ, բաւական է որ ինձ չնեղացնէ։

Լսրա Գասլդըն պահ մը կայ առաւ և վարանմամբ երկրորդ հարցում մ'ուղղեց։ Չխոթած կ'երևէր, և այդ չխոթուխնը կ'ցաւցնէր։

— Սիրելի բարեկամ, նոր հարցում մ'ունիմ ընելու... մէյն... միայն կ'խնդրեմ որ չնեղանաս։

— Սիրելիդ իմ Գասլդըն, պատրաստ եմ ինչ որ կ'փափաքիս քեզ պատմելու։

— Ի՞նչպէս ստորագրեցիր նամակը։

Օնլօ պատասխանեց տրտմադին։

— Ուրիշ սրբական անուամբ ստորագրեցի, անուն մ'որ միայն մեզ ծանօթ էր։ Այսպիսի սրբալիր անուններ ունէինք... մինչ այր ու կին այդ տեսակ անուններ գործածելու սովոր են իրենց ամուսնութեան առաջին օրերը — յարեց նա չխոթուխմեամբ։

— Անշուշտ — մրմնջեց համակրելի Գասլդըն։

— Այդպիսի մակդիր մ'երկար ժամանակ տևեց։ Իմ հօրս մի հին բարեկամն օր մ'եկաւ կիս տեսնելու և՝ զուարթադին վայրկեան մը պիս տխուր շուն կոչեց sad dog, և Ֆէնելլ այդ դատապին վրայ սկսաւ Տօկի անուանել գիս, և ես ալ սակս քաղերուն պէս՝ Ֆրենք Տօկի կ'ստորագրէի։

— Անշուշտ — մրմնջեց վերստին Գասլդըն, որպէս թէ այդ-պիսի ստորագրութիւն մը սովորական բան մը լինէր։ Ապա յարեց — Եւ այս պարագային մէջ։

— Այս պարագային մէջ ալ երջանիկ յիշատակներով լի այդ անունը գործածեցի։ Ֆրենկ Տօկի օտարի մը համար շատ սխալմամբ բան մը կրնայ երևիլ, բայց Ֆէնելլայի և ինձ համար մեծ Ջշանակութիւն ունէր։

Երկու բարեկամներ պահ մը լուռ կեցան և ապա Գասլդըն հարցուց մեղմօրէն...

— Այնպէս կ'ենթադրեմ թէ Տիկին Ֆրէնսիս նամակդ ըստացած չէ երբէք։

— Եւ ես այդպէս կարծեմ, թոյց այժմ բնաւ վոյթ չէ։ Զուզեցի հետը խօսիլ քեզ տեսնելէն քիչ մ՚առաջ։ Այն ժամանակ չդիտէի ինչ ոչ հիմակ դիտեմ . . . և Ֆէնէլա բնաւ ինձ չպիտի նորէն խօսի։ » Ֆրէնք հառաչեց այս ըսելու ատեն և հեռացաւ։ Ապա նորէն զբօսանաւին եղերը գնաց և գլուխը վար ծռելով կապուտակ ջուրն սկսաւ նայիլ։

— Խեղճ Ֆրէնք — ըսաւ Գասլդըն իրմէ։ — Յուսամ որ գործը կրնայ կարգի դրուիլ։ Պէտք է հասկնալ թէ ինչ եղաւ նամակը, եթէ Տիկին Ֆրէնսիս ստացած չէ։ Այդ նամակը պիտի հաստատէ որ Ֆրէնք . . . ։

Ճանկարծ նոր գաղափար մը ծագեցաւ իր մտքին մէջ և գինք սաստիկ խռովեց։ Օնզլօ որ բարեկամին մօտ եկեր էր դիտեց անոր յուզումն և ըսաւ. — Ինձ նայէ, Գասլդըն ինչ ունիս։ Բոլորովին գոյնդ փոխուած կ՚տեսնեմ։

Ո՛չ ինչ, բան մը չէ — Պատասխանեց Գասլդըն արտօրնօք։ — Գիտես ենթակայ եմ այդ բանին, սրտի ցաւ կ՚կոչեն գայն։ Ներէ ինձ վայրկեան մը համար, վաթը խցիկս պիտի երթամ պառկիմ, — և Գասլդըն վար իջաւ։

Ճշմարիտն այն էր որ նոր գաղափարը գինք ճնշած էր։ Այն ենթադրութիւնն որ, եթէ լսած Օնզլօ, քնածական նոպարի մը մէջ, սպաննած լիներ Մրկըը կոմսը, ո՞ր կ՚մնար ուրեմն Ֆէնէլայի դիւցազնութիւնը։ Իրաւ է որ յանցանքն իր վրայ առած էր, երբ, սակայն միթէ հաւանական չէ՞ր որ բարոյապէս յանցապարտ էր։ Ուրեմն ի՞նչ պատճառաւ ինք իրեւ յանցապարտ ներկայացաւ։ Միթէ պատճառն այս չէ՞ր որ, Ֆէնէլա կ՚վախնար որ իր ամուսին չպիտի պարտկէր նախատինքը, կամ այս պատճառաւ որ նախ կ՚վախնար եթէ այդ եղերերգը դիւցազնական երեւոյթով մը հասարակութեան կ՚ներկայացուէր, իր պատիւը չարաչար պիտի արատաւորէր։ Արդեօք Ֆէնէլա ճշմարիտ դիւցազնուհի մը չէր, արդեօք միայն յանդուգն և չրջահայեաց կին մ՚էր։ Դարձեալ՝ եթէ Ֆրէնք Օնզլօ կ՚հաւատար թէ իր կինն վրէժը լուծած էր, միթէ խոհեմութիւն պիտի լիներ այդ հաւատը վրդովել։ եթէ աւեն գաղտնիք իմանար պիտի կարծէր թէ իր անդիտակ գործով ինք իր պատիւը պաշտպանած էր։ Միթէ խոհեմութեան գործ մը պիտի լինէր այր ու կնոջ մէջտիրող յարաբերութեան կապն ի սպառ խզել, թէև ցաւալիէ ր այդ յարաբերութիւնն։ եթէ նորէն իրարու հանդիպէին թերևս փոխադարձ վստահութեամբ բոլոր իրողութեանց վերահաստ լինէին

. . . և ապա ի՞նչ պիտի լինէր հետեւանքը։ Միւս կողմէ՝ եթէ բուն մարդասպանն երեւան գար ի՞նչ նոր վտանգ պիտի սպառնար լորտ Ֆրէնսիսի, իրաւ է որ Տիկին Ֆրէնսիս անպարտ արձակուած էր, թէեւ ինք խստովանած էր թէ սպաննած էր Մրկըր կոմսը, բայց դարձեալ իր ամուսինը դատի պիտի կոչուէր . . . և եթէ դատուէր ի՞նչ պիտի լինէր հետեւութիւնը։ Նոյնպէս կորսուած նամակին գիւտն, որու վրայ իր բոլոր յոյսը դրած էր, ի՜նչ արդիւնք պիտի ունենար։

Այս խնդրոյն լուծումը չատ ծանր կ'թուէր լորտ Գասլդընի, ինքն այնպիսի դիւր և անաղարտ կեանք մը վարած էր որ չէր կարող սրտայոյզ այլայլութեան հանդուժել, և հետեւապէս այս տեսակ խնդիրներ իր միտքը կ'ընկճէին։ Այս բաներուն վրայ մտածելով խոր քնացաւ։

Նաւահանգստին մէջ լսուած ձայներէն և թիակներու աղմուկէն արթնցաւ լորտ Գասլդընի։

ԳԼԽ

ՕՐԴԵԿՈՐՈՅ ՄՕՐ

Ձմրան գիշեր մ'ապիտաբեր,
Երկին պատեր էր բուխ բուխ ամպեր.
Եւ հիւսիսի ցուրտ պախրցին՝
Սուրբ ուժգին։

Ձմրան գիշեր մէր չարաշուք,
Բնութիւնն հագած էր սուգ.
Որ սուրբ մի խուլ մռնչիւն,
Կը տեղար ձիւն։

Կարծես բնութեան այդ հառաչանք
Մօր մը ձայնին էր արձագանք
Որ մահին մօտ նստած, կուլար
Անմխիթար։

Հէ՛ մայր, ցիր ու ցան սեւ մտքեր.
Աչքէն արի արցունք հոսեր,
Անիծելով իր ճակատն գիր
Կայր սգակիր։

Մեքր կը գոչէր. « Անգո՜ւր եղիին ...»
Որ կապտած էր գարդը գրկին,
Միակ որդին, ծոցին ծաղիկ
Անդրանիկ.

« Աստուա՛ծ, հու յոյս խորացող,» կրակը,
« Աղջեօք հրեշտակ մը կը պակսէր,
« Դո՛ւ ինձ առիր սիրտ մօր, ինչո՞ւ
Դիմանալամ ես.»

Թռած էր իր բնիոյշ տախտակ . . .
Էառ՜ած էր երգն ... եւ իր վանդակ ...
Անայի՛ ... հէք մօր սրտին պէս ...
« Աստուա՛ծ իմ, տե՛ս»:

« Տե՛ս ու գրա՛ իմ վիճակիս,
« Շուրջ կեցողին տա՛ր գուկիս.
« կամիմ է կար, շուրջ հանգստատ,
« Տէր բարեբա՛ր ...:

« Ես կամ՛ որ ինձ առիր սէր մօր,
« Տո՛ւր ինձ եւ շունչ որ հոգի ճոր
« Տամ այս անշունչ ցուրտ դիակին,
« Իմ զաւկին:

« Իսկ բէ ... չէ ճնար .. մարէ իմ սէր,
« Որ իմ կեանց յոյս մարեցեր.
« Մի՛ տար տեսնել ... ինձ յոյս այգուն.
« Ալ մահո՛ւ բուն»:

Ա՜խ մը փրթաւ սրտին խորէն ...
Ձայն մը յուշիկ ... տակաւ ճոխէն,
Ազդեց իրեն ... բառ «ո՛վ կիս,»
« Նայէ՛ երկի՛ն ...

« Ի՞նչ է ... արբէ՛ ու արտասուէ,
« Հաւատամն է մօր սրտին ճեշտուկ ...
« Ապրէ՛ ... յուսա՛ ... սրտիդ վիշտեր
« Կը բուժէ Տէր»:

Վերծանած Ս. կաթողիկէ վարժ.
Նիստարիա

ԵՐՈՒԱՆԴ Ց. ԴԱՆԱՃԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ
ԱՇՈՒՂ ԿՈՅՐ-ՄԵՍՐՈՊԸ

(Մանկութեան յիշատակ)

Ա.

Մանուկ էինք այն ատեն, հազիւ հինգ վեց տարեկան։ Աստուածածնայ տօնին անհամբեր սպասելով։ Սահող, անցնող վայրկեանները ժամերու չափ և աւելի երկայն եկած էր մեզի։ Եւ երբ մեր սպասած օրուան ճաշենալը կ'ըսայինք՝ ուրախութեան ու խնդութեան դպրոցականներով տոգորուած, ամեն մանուկներու պէս կը խաղայինք անմեղուներ։

Եկաւ վերջապէս մեր և թերևս ուրիշ շատ մը ընկերակից-ներու սպասած տօնը։ Աստուածածնայ չարաճի իրիկունն էր և մենք մեր մայրիկին չուրջը բոլորած՝ հարցումներու տեղատարափով, կ'ուզէինք կանխաւ հասկնալ թէ՝ ե՞րբ պիտի գար մեր հայրիկը չուկայէն, ի՞նչեր պիտի բերէր մեզի։ Մեր հարցապնդումները այնչափ առաջ կը տանէինք որ նէ չկրնալով իրմէ ուղուած անծայր պատասխաններուն դիմանալ, սրտի տանելի կեղեքումով մը կը համակուէր ու կ'ստիպուէր կեցնել իր խօսքերը, որոնք մեր մանուկ հոգիներուն համար խնդութիւն առթող մեյմէկ պուտեր էին։

* * *

Անդին մեր հայրիկը մինչդեռ տուն կը վերադարնար, մութ փողոցէ մը անցնելու պահուն՝ հեծկլտուքի ձայն մը կը լսէր։ Ի՞նչ էր այն։ Այդ հեծկլտուքներուն մէջ տխուր հառաչ մը, հծծուն ու մրմրած ձայն մը կը լսէր,

— Աստուած սիրող մը չկա՞յ, ինծի պատկելու քնակարան մը . . .։

Ո՛վ էր այդ մարդը, անոր ձայնը անծանօթ էր։

Եւ լո՛ւռ մթութեան մէջ՝ տառապած սրտէ մը պրթած այդ խուլ հառաչանքներն արձագանքներ կ'ըլլային դիմացի տուներու պատին զարնուելով, ու դարձեալ կը լսուէր։

— Աստուած սիրող մը չկա՞յ, ինծի պատկելու բնակարան մը . . . .

Ո՞վ կրնար ըլլալ այդ մարդը, ուրուակա՞ն մ'էր արդեօք։ Ո՛չ, ցերեկին մեր փողոցին մէջ երդոց կայր Մեսրոպն էր անիկա, որ այդ դիւերը պատկելու աեղ մը չգտնելով, փողոցին մէջն խարխափելով կ'ուզէր տեղ մը երթալ, բայց չէր գիտեր ո՛ր։

Բ.

Մեր դուռը բացուեցաւ յանկարծ, և մենք ամենքս ալ մեր հայրիկին ձեռքը՝ սպասուած ուտելիքը և կամ մանկական առարկայ մը յուսալով, առջևը վազեցինք։ Ի՞նչ էր քովինը, ո՛չ, ցերեկուան կայրը։ Այլևս ամենքս ալ մոռցած էինք մեր փընտռած բաները, ու մեր տղայ մտքերը կ'զբաղէր միայն կայր երգիչով, ինչո՞ւ հետը բերեր էր արդեօք, ե՞րգ պիտի կանչել տար կամ քեմանչեն զարնե՞լ պիտի տար։

Ձեռք ձեռքի բռնած վեր ելան անոնք, եկան սենեկին բազմոցին վրայ նստեցան։ Մենք տղաքներս աչքած էինք այլ ևս և լուռ ու մունջ մեր մայրիկին բոլորը չրջանակած։

Մեսրոպ – Պապան — այսպէս կոչել տուաւ մեր հայրիկը — լսելով մեր փոքրիկ ձայները հոգիին ներսէն ճառագայթելով՝ քովը կանչեց զմեզ, և մենք քիչ մը քաշուելէ վերջ, մօտեցանք իրեն։ Ո՛րքան բարի մարդ մըն էր անիկա մեզ համար, անվերջ մաղմանքներով կ'օրհնէր մեզ, ինչ որ մեր հօր դէմքին վրայ բերկրութեան չրջագիծ մը կը չինէր, ապրելով անշուշտ այն բարի ու խոհուն խօսքերով, որոնք մեզի համար թէև անիմաստ, այլ սակայն անոնց բարի չեշտերն մեր մանուկ հոգիներուն մէջ կ'ներկաթաղուէր ու կը բազմապատկուէր։

Մեսրոպ – Պապան հետզհետէ կ'զգաստուէր, ու մեր տունը հալարուժկ բարեմաղթութիւններով կ'օրհնէր։ Որչա՛փ երջանիկ էինք այդ պահուն հօրմէս սկսեալ մինչև մեր պզտիկ մանուկ քոյրիկը։

Քիմանճեճի առաւ նա անվրջապէս, և սկսաւ նուագել այնպիսի կտոր մը, որուն ներդաշնակութեան հանդէպ մեզմէ՛ իւրաքանչիւրն իր զգացումներուն համեմատ առաւել կամ նուազ կ'աքանչանար, ու կը զարմանար այդ չոլափելիքի ու մխանգամային սեստղութեան ահմանուած ճկուն մատներուն առկ ճո-

ճաշող պղտիկ լալկան մանկիկին վրայ։ Ինչ վայրկեաններ էին անոնք Աստուա՜ծ . . . ։

Կ՚արձես կ՚ուզէր, հեռագնեաէ կ՚ուզէր փոքրիկ ջութակը ու պիտի դուրս պոռթկար այն համակ չզսպուած մտաններէն հազորդուած բոլոր զգացումներն ու ներքին զբաղութիւնը, նման կրակին վրայ դրուած սանի մը, ուր ջուրն հեռագնեաէ եռալով դուրս ցայտելու համար սանին կափարիչն անգամ վեր նետելու կը վիտի։

* * *

Ես սակայն՝ այդ նուագածութիւնը ունկնդրելէ աւելի առաջ զգացած ու կլսած աչքերուն աննպատակ չարժումները կը դիտէի։ Մէկ երկու անգամ մեղմիկ հարցուցած էի մայրիկիս թէ՝ ինչպէս եղեր էր որ այդ Պապային աչքերը կուրցած էին. բայց հարցմանս — որ միանգամայն մտմտաքս էր — յաղորդ տուող պատասխան մը կամ նշան մը չընդունեցի։ Ուստի մանկական արգահատող չեշտով մը,

— Մեսրոպ-Պապա — ըսի անոր մօտենալով — ինչո՞ւ աչքերդ կուրցեր են և չես տեսներ։

Վայրկենապէս լռութիւն մը տիրեց սենեկին մէջ, ու ծնողքս կէս մը կարմրած՝ մէյ մը ինձ, մէյ մը Մեսրոպ-Պապային և մէյ մըն ալ կզմզկուռ դէմքը կը դիտէին լռելեայն, բան մը հասկըցընել ու հասկնալ կուզէին կարծես։

Ես ես զգալով արտասանած խօսքիս ծանրակշիռ ազդեցութիւնը, և տեսնելով նաև շուրջս տիրող ընդհանուր լռութիւնը տպաւորի մը այս բոլորս կը դիտէի երեսին երեսին չաոագունելով, վերջապէս Մեսրոպ-Պապան կխմկատար դէմքի տխուր հրատարակութեամբ մը ու անարդունք հնձկատուքի խեղդուկ ձեչտերով։

— Ըսեմ քեզի զաւակս, բայց ազէկ մտիկ ըրէ — ըսաւ ու պատմեց իր բոլոր անցեալը։ Խե՜ղճ մարդուկ, երեք տասնամեայ կրտնցուցած էր երկու սրտի հատոր զաւակներն և ի՛ն եաքը իր սիրելի տասնամեայ կնոջ։ Այս վերջին կորուստէն չափէ աւելի դգածունելով՝ շարաթներով չէ կրցեր քնանալ, դիշեր ցերեկ իր ընակցին հոգեկոչին վրայ կ՚ուլայ ու կ՚ուլայ, մինչև որ աչքերն հեռագնեաէ ալարանալով, նուազելով՝ այլ ևս տեսողական զօրութենէն կը զրկուի։

* * *

Այդ առեն՝ աչուադութիւնն իրեն առպարիկ ընարելով, փոքրիկ ջութակը ձեռքը՝ իր վրայ յորինած եղերերգը՝ յուզիչ ու թրմռուն, սիրականին գերեզմանին դիմացը չատ ժամանակ նատելով կ'երգէր ու կը նուագէր, ի վերջոյ իր ապրուստը ճարելու համար կը չրջկը քաղքէ քաղաք նուագելով սիրականին երգը։ Ու դարձեալ քեմենչին ձեռքը առաւ, սկսաւ երգել քիչ մ'առաջուան երգած երգը։

Ո՜հ, այն առեն այդ նուագին չեչտերը աւելի դգայուն ու աւելի յուզող, լացնող հանդամանք մ'ունէր մեզ համար։ Ու ես կենացս մէջ ունկնդրած չեմ նուագ մը որ անկէ աւելի կենդանի անկէ աւելի խօսուն չեչտերով ուղղակի հոգւոյս ներդործէր։

Պարթէզակ, Օքտոպոս — Գ. Տ. ՄՈՒՐԱՏԱՆ

ՔՆՈՒԹԵԱՆ ՄՈՑՔ ՄԷՋ

Դասեր, քննութիւններ ու հանդիսաներ, ամենքն ալ առատեցան։ Արձակուրդ է։ Գիւղիս կէս ժամ հեռի բլուրի մը վրայ նովաճառոր ծառի մը տակ նստած եմ այժմ . . . հեռի՛ մարդկային ընկերութեան աղմուկին, նախանձին, ատելութեանն, վիճերուն, կռիւներուն, զրպարտութիւններուն, մարմին մաշեցնող, չունչ ու հոգի սպառող քաղաքային մթնոլորտին։ Բնութեան ծոցին մէջ . . . ինչ խաղաղ վիճակ։ Բոլորտիքս կը նայիմ, խորհրդաւոր լռութիւն են անդորրութիւնն կ'զտնեմ . . . Հողին ու քարին, ծառին ու ծաղկին, բոլոնին ու բիբեռնիկին, գեփիւռին ու տերեւին միջեւ կատարեալ հաճերաշխութիւն, ներդաշնակութիւն կ'նշմարեմ։ Խիտ առ խիտ բոյսեր՝ աճած, զարգացած, արգասաւորուած, ծլած ու ծաղկած են, առանց վայրկեան մ'իսկ վրդովելու, կեանքի պայքար մղելու հոգն ունենալու . . . Ո՜ն, ի՛նչ խաղաղութեամբ կ'ապրին ատոնք . . . իրարու մօտիկ, սիրտ սրտի, բերան բերնի . . . գոն են ամենքն ալ։ Մերթ ընդ մերթ հովիկ մը

կ եյնե զանոնք շարժելու, իրարմէ հեռացնելու, բայց ո՛չ, ա-
ռանք դարմեալ իրարու քով են, իրենց գլուխներ նոյն բունին,
նոյն բարձին վրայ դրած՝ կ՛հանգչին խաղա՛դ եւ ա՛ւէրդով։ Ա-
րեգական հրացայտ ճառագայթները ցրուելու, եւ խաղաղիկ
բոյսերը զովացնելու համար կուգան զեփիւռն ու ճովիկը։

Պահ մը վերջ մօտակայ ծառին վրայ տեսայ բուլուն մը, որ
իր ածուշի՛կ ճռուռդումով երգ ու աղօթք մատոյց դինքը ներ-
ածողին ։ ։ վաղուան համար չհոգար նա, ընկերային դիր-
քերու, պատուոյ, հարստութեան բա՛ռն իղձեր, պայքարներ
գոյութիւն չունին իր պտտիկ ուղեղին մէջ։ Ամեն օր կ՛աշխա-
տի առանց հոգնելու, ամեն օր կ՛կերակրուի առանց ո եւ է
վճարում ընելու ։ ։ ։ Իր զգեստ միակտոր՝ սակայն միշտ
մաքուր, միշտ փայլուն է։ Բնութիւնն իր օրրոցն, իր տունն,
ածուպառելի՛ մառանն ու զանձարանն, իր հոյակապ դահլիճն
ու միանգամայն իր գերեզմանն է։ Իր ծնունդը բնական,
կեանքը բնական, մահն ալ բնական ։ ։ ։ Կ՛տեսնեմ շողղո-
դուն արեւն, որ իր կենսական ջերմութեամբ կեանք կուտայ
բոյսին, ասունին ու անասունին ։ ։ Մարդկային վրդովեալ
ընկերութենէն դուրս, տիեզերաց տաճարին անեզր գմբէթին
վրայ եւս կատարեալ համերաշխութիւն եւ ներդաշնակութիւն
կ՛նշմարեմ ։ ։ ։ Մարդկային ընկերութենէն դուրս, բնութեան
ծոցին մէջ դժգոհութիւն, յոռետեսութիւն եւ ։ ։ ։ անձնասպա-
նութիւն գոյութիւն չունին երբէք ։ ։ Արարիչը սուրբ է եւ
Անոր ձեռաց գործերն անարատ ու արդար են։ Ցիրուն քա-
ղաքակրթութեան արտադրած ընկերական գեղծումներն են որ
բնական մարդը կ՛ընեն *անբնական, կեղծաւոր* ու *չշուա՛ռ*։
Կ՛անցնին ժամեր, բոցավառ գունտը մարը մտնելու նպատա-
յայ ։ ։ Արեւ ու լուսին, ծառեր ու ծաղիկներ, բուլուն ու
միջատ յանկարծ կարծես կ՛զոչեն ինձ «ո՛վ օտարական, ան-
ասվոր երեւոյթ, ե՛կ տունդ գնա» եւ ես գլխիկոր տուն կ՛դառ-
նամ, պահ մը վերջ վերստին դիտելու համար *միտպիլն* միւս
կողմը ։ ։ ։ *խրատի՛* ։ ։ ։

Գաթրվան

Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՍՏԵՂ Ո՞Ւ Է

Տարի մըն ալ, երկու եղաւ
Որ այն քարի սիրուն հոգին,
Վնաց ասկից, եւ ալ չկայ.
Ո՞ւր է արդեօք "Քարի՞ն ... յերկին„:

"Քարին յերկին„ ձայնն ըսաւ,
Երբ հարցուցի, "ո՞ւր է Վահէն„
Որեմն նա՝ չունի բնաւ
Վշտեր երկրի, ու վախ մահէն:

"Ան երկնի մէջ,„ երբ չսեցի
Միտս խոով, հանգստացաւ.
Այն էակն, որ՝ սիրեցի,
Չանհետացաւ, անմահացաւ:

* * *

Գնո կը մնայ, մօրն արտում
Իր յոյժ տրտում հայուածքին մէջ
Ինչո՞ւ ուխտեց, յար անվերջ սուգ
Վահէն կ'ապրի՛: Ի՞նչ ցաւ ... անշէջ:

Իսկ՝ հօրն հէք դէմքին վրայ,
Ուրախ ժպիտ, չէ մնացեր,
Բերանն միշտ, կը մրմնայ,
"Որդիս Վահէն, ո՞ւր է գացեր„:

* * *

Ազնիւ Վահէ՛, դու որ հանգստաց
Այդուր շնչես, մի վայր անկիւշ

Ալ ժամ է որ, իւր աչեզարդ
Հօրդ խօսիւ շնչոյդ աւնոյշ:

"Յորելեանիդ պատրաստութիւն,
Երբ կը տեսնեմ, իմ հայր աւգիին
Ալ մի տրտմիր, ա՛ռ, նոր աւիւն,
Ուղիդ արդէն "բերկրի աւնիեն...":

13 Յունիս 1899 ՍԱՐԱՆ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԲՆԱՆԱԼՈՒԻ

Անոնք որ վաւաւոր և խոր քուն մը չեն վայելեր, և կամ հանդիստ չեն քնանար, իրրև կանոն կրնան դանել հետևեալ դիտողութիւններն, որ հանդիստ քնանալու համար միջոց կամ դարման են, ըստ Փրանսացի բնագէտի մը: Այս բնագէտը մի քանի զարմանալի և օգտաչատ փորձերու վրայ հաստատած է մեր դիտողութիւններն, որ ամփոփուած են «գլուխն դէպ Արևմուտք պառկելուն խնդրոյն մէջ»:

Այս դիրքը երբէ՛ք որ և է յարաբերութիւն չունի եղերաբանութեան հետ, այլ գործնական դաս մը, խորհուրդ մը է որ երևան եկած է բուսական թագաւորութեան մէջ տեսնուած զարմանալի յատկութիւններէն: Պրն. Մաւսէ բնագէտն այս հարցման մէջ այն եզրակացութեան եկած է թէ՝ երկրի թաւալումն իր առանցքին վրայ մեծ ազդեցութիւն ունի բոլոր բուսականութեան վրայ, և նուազ աստիճանով մը կենդանեաց վրայ:

Երկրի թաւալումէն յառաջ եկած զօրութիւնն որ կեդրոնախոյս զօրութիւն (centrifugal force) կը կոչուի, չատ նշմարելի է, բայց կը չեզոքանայ կեդրոնաձգութեամբ (gravitation): Եթէ երկիրն աստն և հոմն անգամ աւելի արագ դառնար կեդրոնախոյս զօրութիւնն բոլորովին պիտի յաղթէր կեդրոնաձգութեան և բոլոր երկրի վրայ դտնուղ մարմիններն աւարկաներն դուրս պիտի ցցուէին ու նետուէին: Կեդրոնախոյս զօրութեան ամենաարագ աստիճանն հասարակածին վրայ է, ո-

բովհետև, այն չրջանակն որոյ մէջ երկիրն կը դառնայ աւելի մեծ է հան քան ուրիշ որ և է չրջանակի վրայ։ Հետևաբար կեդրոնաձիգ զօրութիւնն հասարակածին վրայ կը նուազի, և մարմին մը կը կշռէ $^{20}/_{21}$ն ինչ որ պիտի կշռէր հարաւային բեւեռին վրայ։

Այնպէս դանուած է թէ դետերու մէջ հիւսիսէ հարաւ հոսող ջրերն, ըստ բնական օրինաց, ընդհանրապէս բոլորն ալ, դէպի ձախ կամ Արևելեան եզերքն ծռելու յատկութիւնն ունին, և այս յատկէ կ'ուզայ կեդրոնախոյս զօրութեամբ և ճիշտ նոյն պատճառաւ է որ համակեդրոն չրջանակներու, զօտիներու (Concentric Zones) մէջ դանուող ծառերու կոճղերու Արևելեան մասերն աւելի մեծ են քան միւս մասերն։ Այս վերջերս հաստատուած են յիշեալ Ֆրանսացի բնագէտի ծառերու վրայ ըրած հազարաւոր փորձերովն, թէ՝ բոլոր ծառերն ձուաձև կոճղեր ունին և թէ անոնց մեծագոյն առանցքը (axis) միշտ դէպ Արևելք կը դանուի։ Բնագէտն փորձով կը հաստատէ թէ կեդրոնախոյս զօրութիւնն կապդէ ծառերու մէջ եղած բուսահիւթին (sap), ճիշտ այնպէս ինչպէս կ'ապդէ դետերու մէջ դանուող ջուրին, այսպէս ծառերու Արևելեան մասն աւելի կ'ամբ ու կը մեծնայ, հետևաբար բնական է հետևցնել թէ այս զօրութիւնն որոշեալ չափով մը կ'ապդէ նաև մարդկային մարմնոյն մէջ հոսող արեան վրայ։

Եզրակացութիւնն հան հասած է, հետևաբար, թէ երբ մարդ մը երթեմն պառկած դիրքի մէջ կը դանուի, (դրեթէ մարդկային կենաց մէկ երրորդ մասն այսպէս կ'անցնի) կեդրոնախոյս զօրութիւնն կ'ապդէ մարմնոյն մէջ դանուող արեան խառնուելով զայն մասամբ դէպ Արևելք, ճիշտ այնպէս ինչպէս ծառին մէջի բուսահիւթին, և երբ քնացող մը պառկի իր զբօսման Արևմուտքի կողմն դրած իր արիւնն այդ կեդրոնախոյս զօրութեամբ պիտի ուզուի և վազէ դէպ ի ոտքերն, հետևաբար իր քունն ալ պիտի ըլլայ անդորր ու խաղաղ։

Պոստըն, Օքտոպեր 1890

Տ. Գ. ՔԱՋՆԱՆ

ՊԱՏԺԱՊԱՐՏ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ

Ընդհանրապէս ամէն տեղ գեղեցկութիւնը սիրելի ու պաշտելի կ'ներկաուի, այլ բնաւ պատժելի։ Սակայն զարմանալի է որ Մէտիճանց օրով՝ Ֆլորանս քաղքին մէջ, կին մ'իր գեղեցկութեան համար սոսկալի պատժի մը կ'դատապարտուի, ինչպէս որ կ'պատմէ եւրոպական օրագիր մը։

* * *

Ֆլօրանս քաղքի պատմութիւնը մի շատ ատօրինակ դէպքերներ կ'պարունակէ, սակայն ամենէ ահռելին այն կնկան պատմութիւնն է, որ Ֆէրտինանտի իշխանութեան ժամանակ արեան դատաստանը կ'լնդունի, մեղաւոր ոտքերտայտ պատանքի մը նմանող վերարկուի մը մէջ պարուրուած եւ գէմքը դիմակով մը ծածկուած, դիմակ՝ որ ահարկու գանկ մը կ'ներկայացնէր։ Այս կինն՝ որ մահուան թափորին միանալու պատրաստ ճիւաղի մը կ'նմանէր, Ռաղօրա Մօնդալդինի կ'կոչուէր եւ անօրինակ յանցանքի մը համար, այս է իր հիանալի գեղեցկութեանը համար ամբաստանուած էր իրրեւ պատժապարտ։ Վասն զի այնքան գեղեցիկ էր որ քաղքին անդորրութիւնը կը վրդովէր եւ իր ներկայութենանէ անոր բարօրութեան վնաս կը բերէր։ Մօնթալդինի այնքան գեղեցիկ էր որ երբ իր տան պատուհանին առջեւ երեւէր անհամար մարդիկ կ'դադարեցնէին որ անոր նային եւ այսպէս այնքան կ'կռնէին որ պզտոտանները անանցանելի կ'դառնային, այնքան գեղեցիկ էր Մօնթալդինի որ կառավարական պաշտօնեաները իրենց ժամանակը կ'անցընէին անոր երեսը նայելով փոխանակ իրենց գործին պարապելու։ Այնքան գեղեցիկ էր նէ որ երբ բան մը դնելու համար կըրպակները մտնէր, վաճառականները անոր առջեւ կ'սփռէին իրենց բոլոր ապրանքները եւ գրամի տեղ անոր ժպիտները վայելելու համբոյրը կ'հայցէին։ Այնքան գեղեցիկ էր նէ որ երբ

Սանդա Մարիա Տէլֆիօրէ եկեղեցին մանէր ժողովուրդը փո-
խանակ խորանին կողմը դարձնելու իր երեսը Ռօզորայի դըս-
նուած կողմը կ'դարձընէր հիացմամբ և ի գործէին տուն հոգե-
կան սփոփում և հանդիստ լսելու տեղ միայն մոռանալու
թին և մեղք կ'բերէր։

Եթէ առաւօտեան ձկնորսները Ադնոէն դունատ պատանւոյ
մը դիակը հանէին, տարաբաղդ սիրահարի մը դիակն էր այն
որ Ռօզորայի սիրոյն համար ինքզինքն էր սպանած։ Եթէ գի-
շերը պահակը Թաւիշեայ հագուստով տպիտակ մը անկենդան
մարմնոյն վրայ կոխէր, անկասկած էր թէ այդ տղոտը սպան-
նուած էր Ռօզորայի համար, որ դեռ և ս անոր սիրալիր կեր-
պով ժպտած էր և այսպէս ասոիններու կառաղի նախանձը իրեն
դէմ գրգռած։ Եթէ հարուստ հայրեր յանկարծ մեռնէին ասոյգ
էին թէ Ռօզորայի պատճառաւ թունաւորուած էին։ Ինգամ մը
քաղքին մէջ սով կ'սերէր։ Խուժանը հացի պակասութենէ կատ-
ղած խուժից Մօնթալպինէի պալատը, որու սիրահէն կաթիճ
բաղնիք կ'առնէր և ամեն օր ընչայքներ կուտար։ Երբ գայրա-
գին ամիխոը պալատի գռներէն ներս մտաւ, Ռօզորա առանձին
մարմարեայ սանդղի աստիճաններէն վար իջաւ, իր սքանչելի
ոսկեգոյն գլուխը ուսերուն վրայ ծփուն և ձեռքը սկանաւոյ
հովահար մը որով դէմքը կ'հովահարէր . . . այս տեսքին վը-
րայ խուժանը լաւ ու մունջ կ'մնայ։ Պարագլուխները Մօնթալ-
պինեի շրջագրեսան քղանցքը կը համբուրեն և խուժանը ան-
ձայն կ'քաշուի կ'հեռանայ։

Երեցս Մօնթալպինեի գեղեցկութիւնը ամբաստանուեցաւ
վշտաբեկ ծնողաց կողմէ որոց զաւակները Ռօզորայի հրապոյր-
ներուն զոհ գացած էին և Ռօզորա իր գաղտուրներուն առջէ
նեցաւ։ Բայց երբ Մօնթալպինեի գաղտուրներուն գէմքը նա-
յեցաւ, ամենքը մոռցան օրէնքը, երբ լացաւ սիրեցին թէ նէ
անմեղ է. երբ ժպտեցաւ պատրաստուեցան յայտարարելու թէ
իրենք յանցապարտ են։

Երբ գլուխն գանձապահը մեծ գումար մը խորհց և գնդապետ

Ռօզորայի համար զայն վատնելէն եաև, ինքզինքը սպաննեց, այլ ևս չնորհ չգտաւ այլ կինը, զատապարտուեցաւ նէ խաբուելու և Ֆլօրանսէն ընդ միշտ աքսորուելու։ Դատաւարութեան բեմը նշանաւոր Բալատցօ բիացցի առջև կանգնեցաւ և բազմաթիւ ամբոխի մ'առջև դեղանի կինը բեմին վրայ հանեցին։ Դահիճը հրաշէկ երկաթը ձեռք առաւ, Ռօզորայի մատաքեայ շրջազգեստը ուսերէն հանեց պատռեց, բայց իսկոյն հրաշէկ երկաթին տեղ անոր ուսերուն վրայ գրոշմեց իր հրատապ շրթունքը։ Այս յանդուգն գործը գլխովը վճարեց դահիճը, բայց Ռօզորան ազատեց։ Ոչ ոք կ'դանուէր արձակուած վճիռը ներս վրայ գործադրելու։ Այս հրաշալի դէպքը դուքսին ականջը հասաւ։ Գօզմօ Տեմէտեզի ծերունի մէն էր բարեպաշտ ու գթասէր։ Դեռ ևս բրիստոնէական զգացումէ շարժեալ Ռօզորան իր առջև բերել տուաւ, զանի տեսաւ և ներեց։ Մօնթալչինի հնորհք գտաւ, դեղեցիկ լինելու անպատիժ։ Բայց Գօզմօէն վերջը աթոռը նստաւ գնացաւ Ֆիրէնցեան Տը Մէտիչի, ահա անոր հրամանաւ որ Ռօզորա արեան զատարանը դրկուեցաւ և այս զատարանին անդամ վճռուէլ էր որ խեղճ Ռօզորայի դէմքի վրայ դրուեցաւ զանկալին գիմակը, այնպէս որ բանտապահները անգամ չմնդորին և ամէն մահկանացու խորշի և սիրոյ տեղ դարսած զգայ։

Ֆիրէնցեան 39 տարի իշխեց և Գօզմօ Գ. անոր յաջորդեց։ Այն տանն ընդհանուր ներողութեան վճիռ մ'արձակուեցաւ։ Դատաւորները պարտաւոր էին յանցաւորները քննել և ներողութիւնը կատարել։ Ահա այն տանն քաղցեալի գիմակով կին մը գտնուեցաւ, և երբ գիմակը հանեցին երևան եկաւ գիտակի նման հալած ու մաշած գէմք մը ճիշտ գիմակին նման կերպարան մը։ Եւ այս էր Ռօզորա Մօնթալչինի։

ՆԱԻԱՅԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ

ՊԱՏՄԱԿԱՆ

Նաւային սպառազինութեանց համար մեծ տէրութիւններու ըրած ծախսերը ահագին են։ Անգլիա և Ֆրանսա տարին առ նուազն յիսուն միլիոն ոսկիէ աւելի կ'յատկացնեն իրենց նաւերն աւելցնելու համար. այս մասին միւս տէրութիւններն ալ ետ մնալ չեն ուզեր, քանի որ գաղթային հողեր իւրացնելու, պահելու կամ վարձու բռնելու այնքան ախտէ բռնուած են, բայց ասոնց ծայրը չպիտի գայ այս ընթացքով վասն զի Անգլիա ուզելով իր գերակշիռ դիրքը պահել նաւային տէրութեանց քով՝ ուշադիր կը հետեւի հասկնալու համար թէ տարուան ընթացքին մէջ որքան նաւեր չինուելու համար խորհրդարանները կ'քուէարկեն և ինքն այդ համեմատութեամբ կամ անոնցմէ աւելի ըլլալու պայմանաւ իր նաւարաններու հրահանգներ կ'ղրկէ։

Այս կործանում յառաջ բերող ծախքերն զեղչելու նպատակաւ Լա Հէ գումարուող Ջէնըվկեցութեան կամ Խաղաղութեան դեսպանախորհրդին մէջ առաջարկ մը ներկայացուած էր՝ նաւային չինութիւններն կեցնել կամ մեծապէս զեղչելու մասը։ Զարմանալի է որ մանր մունր և մեծ տէրութեանց կողմէ ընդդիմութեան հանդիպեցաւ այս առաջարկ։ Միայն Անգլիա և Ռուսիա համամիտ գտնուեցան։ Բնականաբար կ'ըսեն Անգլիատեաց թերթեր Անգլիա զօրաւոր նաւատորմիղ մը պէտք չզգար այլ ևս աւելցնել իր նաւերու թիւն, երբ միւս տէրութիւններն իրենց տեղն նստին։ Իսկ դալով Ռուսիոյ նա այդ յարաճուն և մեծ ծախքերուն չկրնալով հանդուրժել կ'գոհանայ միայն իբր ցամաքային մեծ պետութիւն մը մնալ։

Այս կարճ խորհրդածութենէ ետք աւելորդ չենք համարիր նաւային մեծ Տէրութեանց ոյժը պարզելու որ հետաքրքրաշարժ ըլլալէ աւելի օգտակար է դիտնալը։

1865 էն ասդին պատերազմական նաւերն իրենց յեղաշրջումն կրեցին, և հետզհետէ վիմիոման երթարկուելով հիմա կուան դրեթէ կատարելագործեալ վիճակին հասան։

Այժմ նաւերն հինգ կարգի կը բաժնուին.

ա) Զրահաւոր (cuirassé)

բ) Յածաւորակ (croiseur cuirassé)

գ) Յածաւորակ թորփիլլոնաւ (croiseur torpilleur)

դ) Աւիզօ, կամ թնդանօթակիր (aviso où canonnier)

ե) Թորփիլակիր (torpilleur)

ա) Զրահաւորներն, զոր միանգամայն բերդանաւ կարելի է կոչել, վիթխարի խոշոր մեծութեամբ զրահապատ նաւեր են. շատ մեծագին են, մէն մին մինչև երեսուն միլիոն ֆրանք կ'ալ-ժէնէ։ Ասոնք ընդհանրապէս պաշարումներու ժամանակ ծովեզրեայ քաղաքներ կամ բերդեր հիմնայատակ ընելու կ'ծառայեն։ Աշխարհիս ամենէ մեծ զրահաւորներն Անգլիա, Իտալիա և Ճաբօն ունին։ Զրահաւորներն ալ բաժանումներ ունին, որք առաջնակարգ, երկրորդական և երրորդական կ'կոչուին. սակայն վերոյիշեալ երեք, պետութեանց առաջնակարգներն որք 15,000 թոնոն կ'անցնին նոյն տարողութիւնը չունին, Ֆրանսայի, Ռուսիոյ, Գերմանիոյ կամ ուրիշ տէրութեանց առաջնակարգ զրահաւորներն, ֆրանսական ամենէ մեծ զրահաւոր մը 12,500 թոնօ է և ռուսական, գերմանական մը հազիւ 10,000 թոնօ. Միացեալ Նահանգաց, Ճաբօնի, Ամերիկեան մի քանի տէրութիւններու, ինչպէս և եւրոպական նաւատորմերու մէջ զետեղած զրահաւորներու թիւն երկու հարիւրը կ'անցնի։

Ահա թէն տէրութեանց զրահաւորներու միճակագրութիւնն։

Անգլիա	55	հատ զրահաւոր	660,000	թօնօ
Ֆրանսա	38	»	368,000	»
Իտալիա	16	»	173,540	»
Ճաբոն	19	»	170,000	»
Ռուսիա	26	»	165,270	»
Միաց. Նահանգ	12	»	140,000	»
Գերմանիա	14	»	128,600	»
Սպանիա	10	»	74,800	»
Աւստրիա	6	»	58,270	»

* * *

Յածաւորակ զրահաւորները վերջին Սպանս-Ամերիկեան պատերազմին մէջ ցոյց տուին թէ շատ մեծ գործ կրնան կատարել, երբ նա մանաւանդ խոշոր, զրաւոր և արագընթաց ըլլան։ Յածաւորակներն թշնամւոյն վաճառականութիւնն փճացնելու, թշնամի նաւերն հետապնդելու և զանոնք գերի բռնե-

լու կամ նեզ ժամանակին ի փախուստ փութացնելու, պէտք եղած ատեն իրր զրահաւոր բերդեր ամրակոծելու կը ծառայեն, մանաւանդ երբ Սպանիական Թնդանօթաձիգ զօրքերու նման սմալ նշանառութեամբ ռումբերն պարապ չվատնեն։

Այս գերազանց պատճառաւ է անշուշտ որ՝ Անգլիոյ պաշտպան – յածաւորակ և Թորփիլ – յածաւորակներու թիւն ու տարողութիւնն ոչ միայն կ'համապատասխանէ այլ և կ'անցնի ամբողջ Ֆրանսայի, Իտալիոյ, Ճաբոնի, Ռուսիոյ, Միաց – Նահանգներու, Գերմանիոյ, Սպանիոյ և Աւստրիոյ միացեալ յածաւորակները։

Հետաքրքրութեամբ կրցած եմ հետեւեալ վիճակագրութիւնը կազմել, թիւերն պաշտօնական տարեցոյցներէ քաղելով։

Անգլիա իր 150 պաշտպան-յածաւորակ և Թորփիլ-յածաւորակներով 600,000 թոնօ տարողութեամբ ահագին ոյժ մը կրնայ ի ձակատ հանել։

Մինչ Ֆրանսա	իր	42	նաւերով	142,400	թոնօ
Իտալի	»	16	»	15,050	»
Ճաբօն	»	20	»	61,000	»
Միաց-Նահանգ	»	18	»	68,000	»
Գերմանիա	»	19	»	64,900	»
Ռուսիա	»	20	»	50,200	»
Սպանիա	»	7	»	26,300	»
Աւստրիա	»	9	»	22,100	»
		153		455,700	»

որով ութ տէրութեանց միացեալ յածանաւերն թէև թուով 153՝ այսինքն 23 աւելի, բայց տարողութեամբ 145,500 թոնօ պակաս մը ցոյց կ'տան, վերև յիշուած ութ տէրութեանց յածանաւերու մէջ կ'գտնուին որ հին են. մինչ անգլիականներն բոլորովին նոր են։ Անգլիա վերջերս սկսաւ մեծ մղումով տալ այս պատերազմիկ նաւերուն և անսովոր ահագին 14,200 թոնօնոց յածաւորակներ ծով իջեցուց ինչպէս անցեալ տարի Բայվուր-Ֆուլն և անոր նմաններ։

*
* *

Թորփիլանաւերն գրեթէ չոգենաւակներու նման տարողութեամբ պզտիկ բայց սրընթաց են այնպէս որ 23 էն 33 մղոն ճամբայ կ'կտրեն ժամուան մէջ, իրենց տարողութիւնն 40 էն մինչև 150 թոնօ է։

Թորփիլանաւերն Թշնամի զրահաւորն օդն հանելու կ'ծառայեն իրենց արձակած զաղտնի Թորփիլներով որ ջուրին մէջէն տրուած ուղղութեան համաձայն կ'երթայ կ'զարնուի զրահաւորի կուշտին, այդ զարկէն պայթում յառաջ կ'գայ և ծովու մէջ տարածուած այդ վիթխարի բերդն օդը կ'հանէ, օդն հանելով և հարիւրաւոր կեանքեր և միլիոն մը ոսկի (սովորաբար զրահաւորի արժողութիւնը)։ Ժամանակ մը զրահաւորներու չինուածքին մէկ կողմ զրուած էր, քանի որ հազար ֆրանք արժէք ունեցող Թորփիլ մը բաւ կ'համարուեր մէկ միլիոն ոսկի և հարիւրաւոր անձեր փճացնել։ Բայց 1885 ին ծովային սպայ մը գիւտ մը հնարեց որով նաւերն իսպառ այսպիսի օդն ելնելու վախէն կ'ազատէին։ Ելեկտրական ցանց մը նաւուն չորս կողմը սփռուած պահեց. այս ցանցն պաշտօն ունէր իր մէջ հիւրընկալելու զրահաւորին վրայ չար նպատակաւ ուղղուած Թորփիլներն։ Այս պատճառաւ Ֆրանսա 250, Ռուսիա 230, Գերմանիա 170 և Իտալիա 140 հատ Թորփիլանաւեր ունեցան։ Իսկ Անգլիա համեմատութեամբ իր նաւային խոշոր զօրութեան մի միայն 170 հատ ունեցաւ և չզգաց աւելցնելու Հիմակ Թորփիլանաւեր Թշնամւոյն դիրքն քննելու և լրատարի պաշտօն կը կատարեն։

(Մնացեալն յաջորդ թուով) Տ. Գ.

ԿԻՒՐՆԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԽՆԴԻՐ

Պատ. հանդիսիդ 12րդ թուոյն մէջ յանձնաւիրներ վերնագրով ուշագրաւ յօդուածն զարմանօք կարդացի։ Յօդուածագիրն որ խնդրելէ կը խորհի, ջուրը փչելով խմող մ'ըլլալ կը թուի՝ զարմանալի է որ անդիտակցարար ուրիշները կը խնդրէ։ Իրաւ է թէ Պ. Շահէն կրնար Կիւրնոյ անուշակ թուխին, կարմրաթոյր կեռասին, մեզրահամ խնձորին ու ծիրանին նման անուշ ու անփուչ լեզուաւ գրել. բայց դուք ալ, չէիք կրնար քիչ մ'անկողմնակալ ոգւով գրել, իրողութիւնն ցոյց տալ անկեղծարար, կրնայիք Պատուելիին քիչ մը քիչ սոխ մանրել։ Դուք իսկ չէք խնդրեր երբ կ'ընէք կամայ՝ թէ ակամայ՝ մարդասուրեան անչահ, գեղուն ջանքերն պաշտպանել։ Ասլաքէն բողոքականութեան անդունդ անունը տալ չեմ համարձակիր, բայց

ասոր ինչ ըսենք, Ակիւլինէ, եթէ Հայ. եկեղեցին անդունդ մը աւելի ահարկու չէ յայտ պատուելիի՝ ինչո՞ւ համար հայ կրօնուսոյցն հապճեպիւ արդիլեց, ինչո՞ւ այնքան կ'վախնայ չափաթաղան 1–2 ժամ սահմանելու Հայ. եկեղեցւոյ դաւանութիւնը որբոց սորվեցուներլու։ Զեմք ուզեր Որբ. տիրանալ, որ բանողը հայացնել, միայն չափաւոր ան ժէջ ժամ մը կամ երկու՝ մեր որբոց Հայ. եկեղեցին սորվեցնելու։ ինչ կայ հոս որ մեզի գաղանիք է։ ինչ անուն տալք լուրջ մաքի ու բարի սրտի տէր Պատուելիին, սիրելիդ իմ Ակիւլինէ, Մե՛ղք պատուելիի լուրջ և ազատախոհ ոգւոյն որ կ'ելնէ Հայ Եկեղեցւոյ մէջ փրկութիւն կայի չկայի ծիծաղաշարժ վէճերով համարիւն որգւոց սրտերը կ'ուծացնէ իրարմէ, կ'ջլատէ հայ որբերու կրօնական ազատութիւնը, կ'արգելու որ հայ որբերը հայ կրթուին, հայ լեզուն ու Եկեղեցին ուսնին. 15–16 տարեկան որբեր որ Դուրեան Սրբազանի Ընթացքն պարզ կարդալու կը տատամսին, թողուք թարգմանութիւն ու լուծում։ Է՛, ո՞ւր է, Ակիւլինէ, Ձեր հայրենեցի դասախօս մրցակիցն, հատ մ'ալ կիւրին ղրկեցէք Ատիլ մը, Կիւլպէնք մը պարծանօք կ'յիշատակէք. չգիտեմ թէ ուրիշներ ալ կա՞ն։ Խնդուքս կը բռնէ երբ, Ակիւլինէ, ձեռնէ կ'լսեմ թէ պատ. Գէորգ Նախանձաւութեան էն հաւատարիմ, խղճամիտ և ազատախոհ գործիչներէն մին եղած է (ճանըմ սա ածականներն ալ ի՛նչ ածեցան). կեցցե՛ս, ձեր սրատեսութիւնը կամ հեռատեսութիւնը իրաւ որ կ'զերազանցէ Շահէնինը։ Պատ. Գէորգ թող փայլի իր բեմէն, բայց հայ որբոց կրօնական ազատութիւնը սահմանափակող կղերի մը չվայլեր որ ազատախոհ և լայնախորհուրդ ըսեմք. ո՛չ, այս ածականներն մեր կարծածին չափ ածան չեն, հետևապէս արժեմին չարժեմին, տալու չեմք։ Մարդասէր է՝ իր մի քանի տասնհակ ժողովրդեան համար. մեզի ի՛նչ. անձնուէր և բարեգործ է այն պայմանաւ որ բողոքական բլլալու յօժարութիւնդ հաւաքէ։ Ո՛չ, ազատախոհ է չեմք կրնար ըսել պատուելիի համար քանի որ հայ որբոց նկատմամբ Ազգ. Առաջնորդարանի հետ կնքած պայմաններն առաքուր ըրաւ, մեծ պահքի առաջին օրը գառն և Զատկի առաջին կիւրակին սոխով խառն ապուր կերցունել հրամայեց ի նախասինս մեր։ Ո՛չ, հաւատարիմ գործիչ չեմք կրնար նկատել քանի որ հակառակ մարդասիրաց փափաքին՝ հայ կամ բողոքական դպրոցներ կամ կը զանազանէ նպաստից բաշխման մէջ։ Սապէս է որ չեմք կրնար համակրիլ մեր ամենա-

սիրելի Եկեղեցւոյ հիմերը փորել ձգտող անգութ ձեռքերու, մեր հարց անուչիկ բեկորները, որբերը, մայրենի հնադարեան Եկեղեցւոյ ծոցէն հեռացունելու բրօթականտայի անարժան ձեռնարկներու։ Ահա այս պատճառաւ պատուելին տեղացւոց մեծէն մինչև փոքրին անտանելի դարձած է։ Յիրաւի միամիտ ժողովուրդը տեսեն մը Եպիսկոպոսի մը պատիւն տուաւ նման, բայց չուտ հասկցաւ որ սխալեր է, ղի պատուելին չկրցաւ երկար ծածկել ինքզինքը, խաղը դուրս տուաւ ինչպէս կ'ըսուի առակօրէն։

Կ'լսենք որ որբ մ'արտաքսուած է Որբանոցէն իր ապականութենեն դասնալ չուզելուն առթիւ, այսինքն, բողոքական դասանանքն կարգալով անդամ չըլլալուն համար։ Ակիւլինէ, կը տեսնե՞ս, աղատախոհ պատուելին կշտացեր չէ՝ Նշան Նարեկեանով, կարապետ Տէլիպէլեանով, կարապետ Աբանեանով և Մինրան Փերանեանով, Գևոնդ Խըրըմեանի ալ ձեռք երկնցուցեր է որ սակայն սաստիկ հակառակեր է Որբանոցի լիահաց սեղանն ու հաճելի մթնոլորտն մոյ տալով։ Ս. Մաղուղի անձուկ ու սուղ էջերն կ'սահիպեն վեզ չմանրամասնել Որբանոցի անցուդարձերն, որոց դուք իսկ, իմ Ակիւլինէ, ի մօտուստ տեղեակ էք, կ'ցաւիմ ի սրտէ որ ողբերգի դատ մը պաշտպանելու դառն հարկին տակ դանուեր էք։ Մենք խոստո հանդուած ենք որ մեր աղքատութիւնը, մեր թշուառութիւնը կը չահագործուի՝ դէմ կիւրինի մէջ։ Դուք լաւ կ'գիտէք անտեսական ճախողուածէն յառաջ պատուելիին գործունէութեան և ապրեցութեան չրջանակը, այսօր եկո՛ւ տես որ մեր ժողովրդեան մէջ իսկ ձայն ունի հացով ու լաթով անդամ կ'չահի կոր, հոգւոյ աչքեր կ'բանայ կոր, ողորմելի՛ հոգիներ, որք կոր մը լաթով, հացով կ'բացուին, հրաչալի՛ զօրութիւն։ Աններելի ատերախտութիւն է երախտագիտական զգացմամբ չգիշել ազնուասիրտ մարդասիրաց բարերար ձեռնարկը, բայց սիրելի չէ մեզ կարեկցական նպաստները բարեսիրաց բոլորովին անծանօթ և անհամոյ նպատակի մը ծառայեցնելը։ Այո՛, անմահ պիտի մնան միշտ մեր սրտերու մէջ օտար այլ ճշմարիտ բարերարներ, որք չափաւոր և զուտ մարդասիրական ոգի մը ցոյց կուտան որբանոցի գործոյն մէջ, և կ'բազձան որ որբերը հոյ մեծնան, հայրենի օջախը վառեն, պապենական դուռը փակ չը թողուն։ ո՞վ կ'տարակուսի թէ այսպիսի սիրտեր ու ճշմարիտ մարդասէրները միայն չունած են ժողովրդեան կ'ն պաշտելին,

սիրտը։ Ակիւլինէ՛, անշուշտ տեղացի ըլլալու կը սպասէիս մեզմէն կ՛ճանչնաք պատուելին ու Արքանոցը, բայց ներուի մեզ ասել որ քիչ մը շատ կարճ կ՛տեսնէք մեր կոչմնակալ ոգին ինչ որ անկեղծ հրապարակագրներու չվայելէ։ Երանի թէ մեր պատմանց հատատարիմ մարդման հանդիսանայիքն ինչ շահ հասարակութեան խոշոր ուսաեր կընել տային։ Մենք մեզ լաւ կ՛ճանչնանք մեզ ծածկուիլ չենացած կը Ուրեմն հաճեցէ՛ք մեր քիչ մ՛անվայել մակդիրներն ետ առնուլ և յետ այսորիկ կրնալով, չափելով ու մեւելով ուղղել, այս է իմ բարեկամական խրատս։

Կ՛Պոլիս, 23 Յունվար 1899 ԴԻՏՈՂ։

Ուրիշ նամակ մ՛ալ Պ. Ճահէն ուղղած է խմբագրութեանս ի հրատարակութիւն, սակայն նկատելով որ զանազան ընթերց այլ նիւթին օտար խորհրդածութիւնս ներկ զատ, այդ նամակը կ՛պարունակէ նաև կէտեր որ Պ. դիտողին գրածներըը կերպով մը կ՛չօշափէ, արժան դատեցաւ, կրկնութիւն չընելու համար, հրատարակել միայն Պ. Դէ՛ղին դիմեն, որ անկոչնակալ ոգւով կ՛պարզէ խնդիրը, այնպէս որ անոր վերադառնալու հարկ չմնայ։

ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Բաւական ժամանակէ ի վեր խօսած չենք տեղական գործոց վրայ, ատոր պարզը կը համարինք ներկայիս, առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, ամփոփ վիճակագրոյց մը պիտի, յատկապէս թէ դոհ կը լինին հարցասէր ընթերցողներն և անտարբերութեան հետևանք չեն նկատեր մեր լռութիւնը։

Ս. Լուսաւորչեան Հիւանդանոց. — Հիւանդանոցի Պատասխանատուութիւնն կը շարունակէ իր նկատմամբ ու հոգածութիւնն, թէև 500 ռուբլի պարտուց տակ ընկճուած, որ դրացած է պարագայից բերմամբ կամ անտեսանելութեամբ։

Հաստատուած կանոնագրով հիւանդաց համար սահմանուած է շուրջ 70–75 անկողին և շատ հազիւ կը պատահին այսքան հիւանդներ. ծերերու և անկարներու նկատմամբ սահմանուած է ձրի ընդունել մի միայն անոնք անօթնական անաւլուչներն, իսկ ունևորներն կամ ունևոր աղգական ունեցողներն ընդունել որոշեալ ամսավճռակով։ Վերջին տարիներս դէպքերու առիթ կամ առանց նախատեսութեան ձրի ընդունուած են բազմաթիւ ծերեր, պառաւներ, անկարներ և այլն, որոնք համեմատաբար հիւանդաց կրկնապատիկն և եռապատիկն են, այնպէս որ Հիւանդանոցի մէջ չամիսուելով՝ ընդարձակ խորհրդարանն ու Սեզանատունն իսկ ծերանոցի և ծուլանոցի վերածուած է և Մեծ. Գաւիաս Եոսյեան, իր հանգուցեալ եղբօր կտակած գումարին մաս մը դործ դրած է ծերանոց շինելու, որոյ բացման հանդէսն, շատ ժամանակ չէ, որ կատարուած է Ս. Լուսաւորչի Տօնին Ս. Աթաղնորդի և քահանայապետական դասու օրհնութեամբ։

Հիւանդանոցի պարագին յառաջ եկած է, զգեաւորապէս, կանոնագրի կանխատեսած սահմանն չը պահելին և անխախտ, ծեր կամ անկարող անուան տակ, ձրի հաց ուտողներու թիւն աւելցնելէն։ Մարդասիրութիւնն եթէ չծորդուած չէ արդարամիտութեան հետ՝ կարող է խաբուիլ պատրուիլ և կարօտելոց բաժինն անկարօտներուն կամ պարապորդներուն չամբել։ Կան մարդիկ, որոնք իրենց ծնողաց կամ բարերարաց ստացուածքն իսկ վատնելէն զկին՝ զանոնք անխղճաբար Հիւանդանոց կը ղրկեն։ [1] Մթթէ չըկա՞ն այսպիսի բազմաթիւ օրինակներ նոյն

[1] Տարիներ առաջ Ա. Պօյաճեան, խաղաթիւ մէջ, իր տունն, վերատնոցն եւ բոլոր ստացուածքն կանխաւ կը դարձնէ իր մօրվրայ, կարծելով թէ մայրն առաջ պիտի մեռնի եւ իր ունեցածն վերստին իմն պիտի ժառանգէ։ Սակայն իմն առաջ կը վախճանի եւ մօր ազգականն (անունն տալու հարկ չըկայ) Պօյաճեան գալով կը տիրանայ Պօյաճեանի բոլոր ժառանգութեան. կը ծախէ տունն, վերատնոցն եւ այլ գոյքերն եւ Պօյաճեանի մայ-

իակ կ. Պօլսոյ մեր Ս. Փրկչեան Հիւանդանոցին մէջ, ուր շատ կան ուսուցք ուրացողք, որք հանապազօր կը տաղնապեն Հոդաբարձութիւնն։

Հայ Որբանոցներ։ — Քաղաքիս Որբանոցներն, ուր շուրջ հարիւր որբեր և որբուհիներ կը պատսպարուին՝ բարեչեան խնամակալութեանց արձուն հսկողութեան հնարիւ, լաւ ապագայ կը խոստանան, թէ՛ ուսմանց տեսակետով և թէ՛ արուեստի և ձեռագործի։ Իւրաքանչիւր կիւրակէ կանոնաւորապէս յեկեղեցի կը յաճախեն և ժողովուրդն կը տեսնէ իրենց առողջական վիճակն և պարկեշտ ընթացքն։

Գերմանացի Տիակոնեսներու Հայ Որբանոց. — Սոյն Որբանոցն, ինչպէս յայտնի է, կը կառավարուի Գերման Տիակոնեսներու հսկողութեան ներքոյ։ Ունի երկու հայ վարժուհիներ, յորոց մին բազմքական, վասն զի որբուհիներու մեծ մասն իրը բողոքական բնորսած են իրենց ծննդավայրերէն և այնպէս արձանագրուած։ Այժմ արձակուրդի առթիւ ամառանոց կը գտնուին, երբ վերադառնան և դասախօսութիւններն սկսին, մի Հայ քահանայ ամեն կիւրակէ, նշանակեալ ժամուն, պիտի աւանդէ քրիստոնէական ուսմանց խրատականներ և Եկեղեցական Պատմութեան գասեր անխարապէս ամենուն։

Գերմանացի քահանան առաջարկած է Ս. Աստուածորդին և Պ. Աւետիքեանին, որբուհիներն մխիթարել և քաջալերել նըպատասխանելով։ Սոյն առաջարկն սիրով ընդունուած է և որոշուած է՝ Տիակոնեսներու Վարժարանի (ո՛չ Որբանոցի) նախկին սանուհիներէն մի խնամակալութիւն կազմել, որ միշտ յա-

---

րըն հետն առնելով կը դառնայ ի Պօլիս։ Կը վատնէ ո՛չ միայն մեծագումար դրամներն, այլ եւ կը ծախէ խեղճ պառաւին գոհարեղէներն։ Տարիներէ զինի վերստին կը դառնայ Իզմիր գործ փնտռելու, բայց չուզեր ոեվը պահել Պօլսահասնի զառուած, տկարացած մայրն. ուստի Յոյնի մը միջոցաւ, իբր ամօթաւոր եւ անտերունչ կին կարդը դնելով կը դրկէ Հիւանդանոց . . . բանի՛ բանի՛ այսպիսիներ։

քաքերութեան մէջ լինի Որբանոցին հետ և հոգայ որբուհիներու հագուստի և այլ պէտքերն, որոց կարօտութիւն ունենան։

Մանկապարտէզ. — Սոյն Մանկապարտէզն՝ որ կը գտնուի շուրջ 15 - 16 տարիներէ առաջ կազմուած կրթասէր Ընկերութեան (Օրիորդաց և Տիկնանց) խնամակալութեան ներքոյ, հետզհետէ կընդարձակի և այս տարի յաջողած է յատուկ շէնք ևս կառուցանել Մ. Հոխիսեանց վարժարանին կից գեղանի վրայ, զոր նուիրած է Մեծ. Դուկաս Եսայեան։ Շէնքն պատրաստուած է և խնամակալութիւնն պիտի ազատի այսուհետև մանուկներ տուն վարձելու հոգածութենէն, որով ծախսուած էր շատ անգամ Մանկապարտէզին անյարմար բնակարաններ վարձել։

Գալաթիոյ Մանկապարտէզի խնամակալութիւնն ևս չատ դադիր է յատուկ շէնք կառուցանել՝ տեղւոյն Եկեղեցւոյ և վարժարանին մօտ գտնուած գետնի վրայ և արդէն շինութեան ծախսուց մեծ մասն հայթայթուած է հանգանակութեամբ։

Գասատական Վարչութիւն. — Թէև վարչութեան անդամներէն ոմանք, ճանապարհորդութեան կամ այլ պատճառաւ, բացակայ գտնուած են, բայց միջամտանութիւնն միշտ շարունակած է իր նկատերն։ Աւօրեայ բազմիւ գործերու կարգադրութենէն զատ՝ կազմած է յանձնաժողով վարժարանաց համար Ծրագիր պատրաստելու (որ արդէն պատրաստուած է) բնտրած է Ուսումնական խորհուրդ, որ ձեռնարկած է բաւական ժամանակէ ի վեր իր ծանր պաշտօնին և Յայտարարութիւն որ հրատարակած է ի գիտութիւն ծնողաց և զրազուած է Ծրագրին համեմատ կարգադրել վարժարանաց ներքին վիճակն, ինչպէս ուսմանց, վարութեանց և լեզուաց դասաւանդութեան բնոյն, դոյզնակս և ուսուցչաց և ուսուցչուհեաց համերաշխ պաշտօնավարութեան։

Վարչութեան լուրջ մտածութեան գլխաւոր առարկան եղած է մանաւանդ պարտաց քարգման խնդիրն, որու նկատմամբ հարկ տեսած է Ազգային Ներկայացուցչութեան հրաւիրել ծանօթ ազգային դէմ և նոցա խորհրդներէն ևս օգտիլ։

Այդ խորհրդաժողովին առջև եղած է փոխառութեան դիմել սակաւ տոկոսով և ունեւոր ազգայնոց հնարհիւ վճարելով կալուածական տուրքն, իսկոյն կալուածոց նորոգութեան սկսիլ, ինչպէս և վճարել այն տոկոսաւոր պարտքերն, որոց պահանջման տակ կը նեղուի Տնտեսական ժրաջան խորհուրդն։

Փոխառութիւնն արդէն սկսուած է 5 % տոկոսով և յուսալի է թէ շարունակուելով՝ արդիւնաւոր ելք պիտի ունենայ և պիտի վճարուին, ոչ միայն դիզուած պարտքերն, այլ և պիտի բարւոքի և կանոնաւորի ազգային հաստատութեանց մատակարարութիւնն, որ խանգարուած է քանի տարիներէ ի վեր։ Դաւառական Պատ. Երեսփոխանութիւնն թէև քուէարկած է ներկայ շրջանի Եւմմատացոյցն, բայց տարակոյս չկայ, թէ այն ժամանակ միայն պիտի գործադրուի անթերի և կանոնաւոր, երբ վճարուած լինին հին պարտքերն, մնանացանդ կալուածական տուրքերն, նոր փոխառութեամբ։

Ջրմուռնանք յայտնել թէ՛ Կրօնական Ժողովն, Տնտեսական և Դատաստանական խորհուրդներն ևս կանոնաւոր կերպիւ կը շարունակեն իրենց նիստերն, ինչպէս Աղբատախնամն, որ միշտ կը տագնապի նորանոր եկաւորներու և Թափառաշրջիկ Թշուառներու երեսէն։

Մեր տեղական գործոց սոյն պատկերացոյցն ներկայացնելով հանդերձ՝ կը խոստանանք Ազ. Մ՝ոշ յաջորդ թիւերով հրատարակել նաև թեմական գործոց վիճակացոյցն, վասն զի իրազէկ ենք թէ՛ Ա. Աթոռնորդն, իր Հովուական օրհնութեան առաջին թղթոյն հետ՝ յատուկ հարցարան ևս ուղղած է թեմերէն քահանայից և Թատ. խորհրդոց, պատուէր տալով պահանջուած տեղեկութիւններն հաղորդելու համար և պատասխանները, յոյժ սակաւ բացատրութեամբ, արդէն հասած և արձանագրուած են ի Դիւանատունն Աթոռնորդարանին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անգլիական թերթի մը Ֆրանսայի արդի վիճակին և ապագային վրայ այլ և այլ խորհրդածութիւններ կընէ, որ ընդհանրապէս հետաքրքրական են։ Արդէն յայտնի է թէ Ֆրանսա այս պահուս անկայուն և վտանգաւոր վիճակի մէջ կ'գտնուի, զանազան կուսակցութիւններ՝ արքայական, կայսերական, ընկերահաշտական, կ'խլրային, և կառավարական նոր ձև մը հաստատելու կ'գաւազրեն։ Եւրոպական օրագրերը բնապէս կ'խօսին տարբեր առթակէտներով ֆրանսական ազգին այս երեքուն ընթացքին վրայ։ Ոմանք այս շարժումները վազանցիկ, այլը տևողական հետևանգութեանց սովորական նշանները կ'նկատեն։— Այս իրաւ է, կ'ըսէ մեր ակնարկած թերթը, որ ֆրանսական ժողովուրդը իր աչքը զէպ ի բանակը դարձուցած ամեն բան անկից կ'յուսայ։ Կարգ մը մարդիկ նոր Սահմանադրութեան մը հաստատութեան կ'փափաքին, այս Սահմանադրութիւնը ըլլայ կայսերական, արքայական, կամ ամերիկեան դրութեան համեմատ՝ հանրավարական, իր գլուխը ունենալով հզօր զորձապիր իշխանութիւն մը։ Ուրիշներ կը փափաքին որ արտաքին պատերազմով մը ֆրանսական ազգեցութիւնը Եւրոպայի վրայ տարածուի, և լիայոյս են որ յաղթութիւն պիտի տանին հետևակ որ բանակը վերակազմուած է և զօրեղ։ Իսկ երրորդ կուսակցութիւն մը, թէև լուռ ու հանդարտ կ'երևի, բազմաթիւ է և ազդեցիկ, orարականներ տստիկ կ'երկնչի և կը կարծէ թէ այդ orարականը Ֆրանսայի կործանման համար գաղանի կ'գաւազրէ, և երբ միակ պաշտպան կ'նտաւ բանակը։ Այս մարդիկ կ'կարծեն նաև որ նոր պատահած վէպքերը իրենց յոյսերը ի գերև հանած են և այս վէպքերուն հեղինակները կ'համարին հրէաները, կամ բոզորականները, կամ օտարականները, կամ ներքին մատնիչները։ Այս կարծիքը կա-

ըեղի չէ ջրել փաստերով, և հետևաբար շատեր կ'ոտանեն որ բանակին միջոցաւ Ֆրանսայի Իշխանները ճգմուին կամ պատերազմով, կամ յեղափոխութեամբ։ Կարելի է ըսել թէ Ֆրանսացիք մեծ մեռամբ կ'ոտանեն որ քաւական զօրաւոր և վստահելի զինուոր մը երևան հնչէ և կառավարութեան դլուխն անցնելով Ֆրանսան վերահաստիէ։ Շատ հաւանական է որ բանակին համար այս խանդավառութիւնը դլխաւոր պատճառ եղած է հակառէֆիւսեան կիրքեր բորբոքելու և խռովութիւններ յարուցանելու, խռովութիւններ՝ որ ընդհանրապէս կ'դդդեն ցարդ բոլոր Ֆրանսան։

Այս վերջին երկու տարուան մէջ Ֆրանսայի մէջ տեղացին բազմաթիւ մը կ'երևի մեծ ֆրանսացի մը դտնելու, ֆրանսացի մը՝ որ կուսակցութիւնները զսպէ, բարեկարգութիւն հաստատէ և երկրին պարծանք բերէ։ Ֆրանսացի ժողովուրդը կ'սիրէ իր դլուխն ունենալ մեծ մարդ մը, կ'դնահատէ հանճարը ունչի քան ամեն ժողովուրդ, և մինչդեռ հաւատարութեան կ'ցանկայ, կ'արհամարհէ հաւատարներու դերակշռութիւնը։ Արդարև, հնդնասէր դիւրաբորբոք գաղդիացին քալ դիտէ որ կամդեթայի մահաւանէ ի վեր Հանրապետութեան դլուխը անցած են մեծ մեծ մարդիկ, արժանի կամ անարժան, բայց բոլորովին դուրկ նախանձնոտութենէ, և հետևապէս սրտովին կ'անդամանեն զանոնք։ Երկրին մէջ չկայ նախանձ մը, տաղնապ մը, զօրապետ մը որ զօրաւոր կուսակցութիւն մը ունենայ։ Կրնայ խումբի կամ կուսակցական հաւատացի մը պետը լինիլ, առանց երբէք ուշադրութիւն դրաւելու։ Նոյն իսկ պարտն Բլէմանոս անպաշտօն ձեաց, թէև ազատականութեան մարմնացումը կ'նկատուէր։ Նոյնպէս անշուք անցաւ Հանոտօ, թէև իր բարեկամները այնպէս կ'կարծէին թէ Ֆրանսա վերջապէս Ռիշլիէօի նման մարդ մը գտած է։ Ուստի ֆրանսացիք իրենց չորդին կ'նային եռանդագին որ ապագային մարդ մը գտնեն Ֆրանսայի մէջ։ Բնաւ հոգ չ'ունին ըներ թէ այդ մարդը ինչ ծագում, ինչ կացութիւն և ինչ արհեստ ունի։ Աշխարհը նուաճեցին Գեղապիտի մը տաղնապութեամբ, և բոլորովին կ'յուսան որ վերստին կարող են դայն

ներուածել զազթային զօրապետի մը միջոցաւ, ինչպէս Տոռտ, կամ երկրախոյզի մը ձեռօք, ինչպէս Մառշան, կամ զօրաւոր կուսակալի մը ձեռօք ինչպէս կալիէնի։ Այնքան ուժգին է այս վախքը որ ամէն փառասէրներու առջև ընդարձակ ասպարէզ մը կ'բանայ։ ''Ֆրանսա կ'փափաքի ունենալ Իշխանապետ մը, և կրնայ զինն ընտրել,, այս է ընդհանրապէս ի Ֆրանսա տարածուած զգացումն, որ թէև ծիծաղելի անգղիացւոց համար, ֆրանսական բնաւորութեանը մէջ խոր արմատ ձգած է։

Ֆրանսական այս յուզման մէկ նոր նշանն ալ կասկածն է, *զերբևական կասկած*, ինչպէս կ'կոչէր Բառայլ։ Տրէյֆիւսի դատին ընթացքին մէջ ֆրանսական մտքի այս յատկութիւնը ցայտլի կերպով մ'երեան եկաւ . . . ֆրանսացիք երբ սկարտութիւն մը կ'զգան, այդ սկարտութիւնը մատնութեան կը վերագրեն և կ'պահանջեն որ պաշտպանուին։ Բնական չէ, կ'ըսեն, Ֆրանսայի համար որ երկրորդական դիրք մ'ունենայ երկրի վրայ, որ Անգղիայէ ետև մնայ կամ Գերմանիոյ կողմէ արհամարհուի, կամ Ռուսիայէն կախում ունենայ։ Մնշուշտ թերութիւն մը կայ տեղ մը, և այս մարդիկ — մեզ կառավարողները, ինչ որ ըլլան — բաւական ուժեղ, բաւական պարկեշտ, կամ բաւական հանճարեղ չեն որպէս զի Ֆրանսան յառաջ տանին։

բայց սէրը կայր է և սիրահարները՝ իրենց ըրած սիրուն խենդութիւնները չեն կրնար տեսնել. քանզի եթէ կը-նային, նոյն ինքն Քուբիտոն կը չիկնէր իմ այսպէս մանչի մը փոխուիլս տեսնելով։

Լօրէնզօ. — *վար իջէք, դի չահակիրս պիտի ըլլաք։*

Ճէնիքա. — *ինչ, միթէ ես իմ ամօթին ճրագ պիտի բռնեմ? ։ Իւօք անիկա ինքնին խիստ լուսաւոր է։ Ձշմարիտ, ասի չատ ակներև պաշտօն մ'է, սիրելիս, և ես հարկ էր որ մութի մէջ մնայի։*

Լօրէնզօ. — *Բայց այնպէս ես, անուշիկս, մանչի սիրտն հանդերձին մէջ։ Սակայն չուտ եկուր, վասն զի գաղտնապահ գիշերը փախստականի դեր կը խաղայ և Պասանիօի խնջոյքը մեզի կ'սպասեն։*

Ճէնիքա. — *Դուներդ գոցելէ և ուրիշ քանի մը տուգանքներով ևս դրպանս զարդարելէ ետքը անմիջապէս ձեր քով կ'ուղամ։*

(*Վերէն դուրս կ'ելնէ։*)

Կրացիանօ. — *Յանուն կնդուզիս, ոչ մէկ հրեայ մը, այլ սիրունիկ մ'է նէ։*

Լօրէնզօ. — *Սրատես կը սիրեմ զնէ, վասն զի ուշիմ է, եթէ կրնամ լաւ գտնել, և գեղեցիկ է, եթէ աչքերս ճիշտ կը տեսանեն, և անկեղծ է, ինչպէս որ ապագոյցը տուաւ. և այսպէս ուշիմ, գեղեցիկ և անկեղծ ըլլալով՝ անշուշտ հոգւոյս մէջ գետնաքաշ է։*

վարից կը մտնէ ՃԷՍԻՐԱ

Ինչ, եկար? ։ Օն, տէարք, երթանք! ։ Մենք Պասանիօի ընկերները, այս պահուս, մեզի կ'սպասեն։

(*Դուրս կ'ելնէ Ճեսիքայի և Սալարինօի հետ։*)

կը մտնէ ԱՆԹՕՆԻՕ

Անթօնիօ. — *Ով կայ հոն?։*

Կրացիանօ. — *Տէր Անթօնիօ։*

Ամբօնիօ. — Ինչ է այս ? . Կրաչիանօ, ուր են միւսները ? ։ Ժամը լինն է. մեր բոլոր բարեկամները ձեզի կ'սպասեն, Ա.յս դիշերը ծախսում չը պիտի ըլլայ, հովը նպաստաւոր դարձաւ, Պասանիօ իսկոյն նաւ պիտի մտնէ: Քանի հոգի ղրկեցի ձեզ վինաւելու համար։

Կրաչիանօ. — Շատ ուրախ եմ ատոր համար, առաքաստանները պարզելով ճամբայ ելնելէ աւելի մեծ բերկրանք չեմ փափաքիր։

(Դուրս կ'ելնեն։)

ՊԱՏԿԵՐ Ը.

Պելմօնթ, Բօրշիայի տան մէջ սենեակ մը։

Ընթրիւն փողերուս· կը մտնեն ԲՕՐՇԻԱ, ՄՕՐՕՔԻ ԻՇԽԱՆԸ եւ իրենց հետեւորդները

Բօրշիա· — Գացէք, վարագոյրը մէկ կողմ քաշեցէք և տարբեր արկղիկները այս ազնուատոհմ իշխանին առջև երևան բերէք· — Ա.յժմ կատարեցէք ձեր ընտրութիւնը։

Մօրօք· — Առաջինը ոսկի է, որ սա մակագիրը ունի· «Ով որ զիս ընտրէ, պիտի չահի, ինչ որ բաղձում մարդիկ կը փափաքին »։ Երկրորդը արծաթէ՝ որ սա խոստումը կ'ընէ· « Ով որ զիս ընտրէ, իր արժանեայ չափ պիտի ստանայ »։ Ա.յս երրորդը՝ նայեմ կապար, նոյնչափ բիրտ ազդ մը կը կրէ· « Ով որ զիս ընտրէ, պարտի իր ունեցածը տալ և վտանգել »։ ինչպէս պիտի դիտնամ թէ ընտրածս ճիշտն է ?։

Բօրշիա· — Անոնցմէ մին, իշխան, կենդանագիրս կը պարունակէ, եթէ զայն ընտրէք, իսկոյն ձերն եմ։

Մօրօք· — Թող Աստուած գատողութիւնս առաջնորդէ։ Տեսնենք, մակագիրները վերստին քննել կուզեմ։

Լ.Դ

Ինչ կ'ըսէ սա կապարեայ արկղիկը ? « Ով որ զիս ընտրէ, պարտի իր բոլոր ունեցածը տալ և վտանգել »։ Պարտի տալ, ինչ բանի համար ? կապարի համար ? Ա՛յս արկղիկը կ'ապառնայ։ Մարդիկ որ ամեն բան կը վտանգեն, կարևոր չահերու համար կ'ընեն այդ։ Ոսկիէ միտք մը սենլքորի երևոյթներուն առջև չը խոնարհիր։ Ուստի կապարի համար բան մը ոչ կուտամ, ոչ ալ կը վտանգեմ։

Ինչ կ'ըսէ արծաթը իր կուսական գոյնով ? « Ով որ զիս ընտրէ իր արժանեայ չափ պիտի ստանայ »։ Իր արժանեայ չափ։ Նեցիր հոն, Մօրօք, և քու արժանիքը ճիշտ ձեռքով կշռէ, եթէ այլոց ըրած դնահատութեան վրայ չափուիս, բաւական կ'արժես, և սակայն բաւականը կրնայ մինչև այս տիկինը չը հասնիլ, և սակայն արժանիքիս վրայ երկմտիլ՝ անձիս հեղգ նուաստացուցին է միայն, իր արժանեայ չափ։ Հապա, բամբիշնն է այն, ծը-նունդով արժանի եմ անոր, և հարստութեամբ, չնորհ-ներով և դաստիարակութեան տուած յատկութիւննե-րով, բայց անոնցմէ ալ աւելին, սիրով արժանի եմ ա-նոր։ Ա՛րդեօք ալ աւելի չերկմտելով զայս ընտրեմ ? Անդամ մ'ևս տեսնենք ոսկւոյ վրայ փորուած գրոյցը։ « Ով որ զիս ընտրէ, պիտի չահի, ինչ որ բազում մարդիկ կը փափաքին »։ Հապա, բամբիշն է այն, բոլոր աշխարհ անոր կը փափաքի, երկրի չորս անկիւններէն կուգան համբուրելու այս խոյանը, այս մահկանացու չնչուն սր-բուհոյն։ Հիրդանեան անապատները, լայնածաւալ Ա՛րա-բիոյ ընդարձակ ամայութիւնները, հիմա, արահետիյ պէս են իշխաններու համար, որ գեղեցիկ Բօրչիան նկատելու կուգան։ Չրային իշխանութիւնը խոչոտ մը չէ օտար քա-ջերը կասելու կարող, այլ նոքա իրր առուտակի մը վրա-յէն անցնելով՝ կուգան նաղելի Բօրչիան տեսնելու։ Ա՛յս երեքէ մին ներսա երկնային պատկերը կը պարունակէ։ Մ'իթէ հաւանական է որ կապարն ըլլայ անիկա ? Ա՛յն-պիսի յաճ խորհուրդ մ'ունենալ գնհնապարտաւոր է։ կապարը շատ կոչտ է ներսա պատանն իսկ փակելու հա-

մար՝ նահմ դամբանին մէջ: կամ պարտիմ խորհիլ թէ նէ ամփոփուած է արծաթին մէջ, որ վորձուած ոսկիէն տասնապատիկ նուազ արժէք ունի? : Ո՛ մեղապարտ խորհուրդ! : Ա.ինչափ թանկ գոհար մը երբէք ոսկիէ տօրինի մետաղի մը մէջ չեռուած չէ: Անգլիոյ մէջ դրամ մը կայ, որ ոսկիի վրայ դրօշմուած հրեշտակի մը դէմքը կը կրէ, բայց դրուստ քանդակուած է այդ, մինչդեռ հոս հրեշտակ մը ոսկիէ մահճի մը մէջ, ներսը կը պառկի: Տուէք ինծի բանալին: Ասիկա կ'ընարեմ, ինչ կուղէ թող ըլլայ:

Բօրջիա· — Ահա, առէք, իշխան, և եթէ տարաղս հոն գտնուի, ես ալ ձերն եմ:

(Իշխանը ոսկիէ արկղիկը կը բանայ:)

Մօրթ· — Դժոխք! ինչ կայ հոս? մեռելի գանկ մը, որու դատարկ կոպիճին մէջ գրուած վաթսնեթ մը կայ: Գրութիւնը կարդամ:

Սահեն ինչ որ կը փայլի ոսկի չէ,
Ոտկը գայլ չսեցիր հարկաւ,
Շատ մարդեր իրենց կեանքը ծախեցին,
Ոսկի արտաքին տեսիլ դիտելու համար.
Ոսկեզօծ կոնդերը որդեր կը ծածկեն:
Եթէ որչափ արի, այնչափ ուշիմ ըլլայիր,
Մարմնով պարման, դասուռով ծեր,
Պատասխանդ փարոյրինը չէր ըլլար,
Ողջամիտ երթաս, խնդիրս պաղ է:

Պաղ է, ատուդիս, զուր վատառակ, ուրեմն երթաս բարեաւ տօթ, բարի եկար, ատուդյո Բօրջիա, ձեռք բարեաւ: Միրաս չատ վշտակիր է, ձեռնէ տալիկիչ հրաժեշտ առնել չը հարդուժեր, կորուսողք այսպէս կը մեկնին:

(Դուրս կ'ելնեն:)

ՊԱՏԿԵՐ 8.

Վենետիկ փողոց մը:

Կը մտնեն ՍԱԼԱՐԻՆՕ եւ ՍՕԼԱՆԻՕ

Սալարինօ. — *Ինչ կըսես, մարդ! Պասանիօին առաջաստած երթալը տեսայ. կրաչխանօ անոր հետ միասին գնաց, և վստահ եմ որ Լօրէնզօ անոնց նաւին մէջ չէր:*

Սօլանիօ. — *Աղջամ Հրէան ճիչերով արթնցուց դուքսը, որ անոր հետ Պասանիօի նաւը խուզելու գնաց:*

Սալարինօ — *Շատ ուշ հասան, նաւը առաջաստած էր, բայց հոն դուքսին իմացուցին թէ կօնտոլի մը մէջ միասին տեսնուած էին Լօրէնզօ և իր սիրուհին Ջէսիքասակէ զատ Անթօնիօ վստահեցուց դուքսը թէ անանք Պասանիօի հետ նաւին մէջ չէին:*

Սօլանիօ. — *Երբէք չեմ լսած զայրագին ճիչեր այնչափ չափով, այնչափ յայլանդակ, թշնամանիչ և այնչափ յեղյեղուկ, որչափ չուն Հրէան արձակեց փողոցներուն մէջ. «Աղջիկս! Ո՛ տուգաթներս! Ո՛ աղջիկս Քրիստոնեի մը հետ վախած! Ո՛ Քրիստոնեայ տուգաթներս! արդարութիւն! օրէնք! տուգաթներս և աղջիկս! Կնքուած տոպրակ մը, կնքուած երկու տոպրակ տուգաթներ, կրկին տուգաթներ, որոնք աղջիկս գողցաւ ինէ: Եւ դոհարներ, երկու ակունք, երկու ճոխ և թանկ ակունք, որ աղջիկս գողցաւ: Արդարութիւն! գտէք աղջիկս, նէրա քովն են ակունքը և տուգաթները»:*

Սալարինօ. — *Վենետիկի բոլոր տղաքը անոր կը հետեւին գոչելով՝ ակունքը, աղջիկը, և տուգաթները:*

Սօլանիօ. — *Թող բարի Անթօնիօն պայմանաժամին անվրէպ գտնուի, եթէ ոչ այս ամենուն համար ինքը պիտի տուժէ:*

Սալարինօ. — *Ազէկ յիշեցիր, երէկ Ֆրանսացիի մը հետ*

խօսեցայ, որ ինձի ըսաւ թէ այն նեղ ծովերուն մէջ, որ Ֆրանսան և Անգլիան իրարմէ կը զատէն, մեր երկրի նաւ մը կորսուած է, թանկագին ապրանքով լեցուն. երբ ա- սիկա ըսաւ խոկոյն Անթօնիօն մտածեցի և լուռթեամբ մաղթեցի որ իրենը չըլլայ։

Սօլանիօ. — *Աղէկ կ'ըլլայ որ լսածդ Անթօնիօին պատ- մես և սակայն ոչ յանկարծուստ, վասն զի այս լուրը կրնայ անոր տխրութիւն պատճառել։*

Սալարինօ. — *Անկէ աւելի բարեսիրտ տոհմիկ մը եր- կրի վրայ չը գտնուիր։ Պասանիօի և Անթօնիօի իրարմէ բաժնուիլը տեսայ։ Պասանիօ ըսաւ թէ պիտի չուտայէ իր վերադարձը, ան ալ պատասխանեց, «Մի ընէք ատի, ձեր գործը մի հարևանցէք իմ պատճառաւս Պասանիօ։ Այլ կեցէք հոն որչափ ատեն որ պէտք է զոյն կատա- րելու համար և Հրեէին ինէ առած մուրհակը թող չը տխրէ ձեր սիրով զեղուն միտքը. ղուարթ եղիք և ձեր բոլոր խոհուեմները գործածեցէք սիրաբանութեան և այնպիսի սիրային անուշ ցոյցերու, որ հոն վայելչապէս կը յարմարին ձեզի», և այն ատեն աչքերը արտասու- քով լեցուն երեսը դարձուց, իր ձեռքը եռևէն երկն- ցուց և յոյժ զգայուն սրտայուղութեամբ մը Պասանիօի ձեռքը սեղմեց և այսպէս իրարմէ բաժնուեցան։*

Սօլանիօ. — *կարծես թէ այս աշխարհը սոսկ անոր համար կը սիրէ։ Կ'ապաչեմ երթանք և գտնենք զոյն և իր ընդգրկած տխրութիւնը որ և է զուարճութեամբ թեթևցնենք։*

Սալարինօ. — *Այդպէս ընենք։*

(*Դուրս կ'ելլեն։*)

ՊԱՏԿԵՐ Ց.

Պեղումներ, Բօրշիայի տան մէջ սենեակ մը։

Կը մտնեն ՆԵՐԻՍԱ. ապատաւորի մը հետ

Ներիսա. — *Շո՛ւտ, չո՛ւտ, կ'աղաչեմ քեզի, վարպետ պրը իսկոյն քաշէ, Արակօնի իշխանը երդում մը առաւ և ընդհուպ պիտի գայ իր ընտրութիւնը ընելու։*

Փողերու բամբիւն. կը մտնեն ԱՐԱԿՕՆԻ ԻՇԽԱՆԸ, ԲՕՐՇԻԱ. և անոնց հետեւորդները։

Բօրշիա. — *Ահա հոն են արկղիկները, ազնուատոհմ իշխան, եթէ ընտրէ՛ք այն որ պատկերս կը պարունակէ, մեր հարսանեաց ծէսը իսկոյն պիտի կատարուի. բայց եթէ վրիպի՛ք, առանց ուրիշ խօսքի, տեր իմ, պէտք է ընդ վայթ ասկէ մեկնի՛ք։*

Արակօն. — *Երդումս երե՛ք բան ընել կը պատուիրէ ինծի. նախ՝ երբէ՛ք մեկու չը յայտնել թէ որ արկղիկն է որ ընտրեցի. ետքը՝ եթէ ճիշտ արկղիկը ընտրելէ վրիպիմ, երբէ՛ք, իմ կեանքին մէջ, օրիորդ մը ամուսնութեան չը խնդրել. վերջապէս՝ եթէ ընտրութեանս մէջ սխալիմ, անմիջապէս ձեղ թողուլ և հեռանալ։*

Բօրշիա. — *Ամեն ո՛ք, որ իմ տրուած անձին համար իր բախտը փորձելու կուգայ, այն պատուէրները կատարել կ'երդնու։*

Արակօն. — *Այդ պէս ես ալ պատրաստ եմ։ Հիմա, ո բախտ, յաջողէ իմ սրտին յոյսը։ Ոսկի, արծաթ և անարդ կապար։ «Ով որ դիս ընտրէ պարտի իր բոլոր ունեցածը տալ և վտանգել»։ Պէտք է որ աւելի դեղատեսիլ դառնաս քեզի համար բան մը տալես և վտանգելես առաջ։ Ոսկի արկղիկն ինչ կ'ըսէ ? Օն տեսնենք ! «Ով որ դիս ընտրէ, պիտի չահի ինչ որ բաղում մարդիկ կը փափաքին»։ ինչ որ բաղում մարդիկ կը փափաքին. այդ*

«բաղումը» խօլ ամբոխը կը նշանակէ, որ երևոյթէն կ'ընտրէ, յիմար աչքերուն ուռուցածէն աւելի բան մը չը տեսներ, Ներսոյքը չը գիներ, այլ ծիծառի նման, դուրսի պատին վրայ, բայց օդին կը չինէ իր բոյնը, նոյն իսկ արկածներու ճամբուն մէջ։ Ջեմ ուզեր ընտրել այն՝ որուն բազում մարդիկ կը ուենջան, քանդի չեմ ուզեր ռամիկներու հետ ոստոստել և դիս բիրտ խուժանին կարգը դասել։ Այդ՝ դարձեալ քեզի կ'ուզամ, գո՛ւ արծաթեայ գանձարան, անգամ մը ևս ըսէ ինծի, ինչ խրատ իր կը կրես. «Ով որ դիս ընտրէ՝ իր արժանեայ չափ պիտի ստանայ»։ Եւ չատ ալ լաւ ըսուած է, զի ով կըրնայ, առանց արժանեայ դրօշմը կրելու, բախտը չողոմել և պատուաւոր ըլլալ։ Թող ոչ ոք ժամ ուսելու պատիւ մը, որու արժանի չէ։ Ոհ, երանի թէ պատիւները, աստիճանները և պաշտօնները զեղծումով ստացած չըլլային և թէ անարատ համբաւը ունեցողին արժանաւորութեամբը գնուած ըլլար։ այն առեն քանիներ կան որ փեղջրնին պիտի հագուէին, մինչդեռ հիմա գլխիկայ կը կրնան։ քանիներ պիտի հրամայուէլին, որ կը հրամայեն։ որքան ստորին ադամութիւն, այն առեն պատուոյ ճշմարիտ սերմէն պիտի պատուէր և որքան պատիւ ժամանակի բերած կրիտա ու չնչինէն մաքրուելով՝ նորուստ պիտի արծնուէր։ Լաւ, բայց դառնանք մեր ընտրութեան։ «Ով որ դիս ընտրէ, իր արժանեայ չափ պիտի ստանայ»։ Արժանիքիս վրայ կը պնդեմ, ասոր բանալին բերիք և իսկոյն բացէք, բախտս հոս է։

(Արծաթէ արկղիկը կը բանայ։)

Բօրջիա։ — Ձեր հոն գտածին բաղդատմամբ չատ երկար էր այդ դադարը։

Արագօն, — ինչ կայ հոս? ժպտուն ապուշի մը պատկերը, որ պիտակ մը կը ներկայացնէ ինծի! պիտի կարդամ զայն։ Որչափ քիչ նման ես դուն Բօրջիային! որչափ քիչ նման ես իմ յոյսերուն և արժանիքին! «Ով որ

ԳՐՈՒԹՅՈՒՆՔ

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆՑ

ՄԱՄՈՒՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

					Դր՝	
Նոր Այբբենարան	պատկ.	Կ. Պաշտպան				½
Մանկական Պարտէզ	»	»	Դ.	դպրէր	2	
Առաջին Ընթերցարան	»	Մ. Մամուրեան	»	»	2	½
Երկրորդ	»	»	»	«	Զ	» 3
Չորրորդ	» (Գիրեքէ)	»	«	Է	» 6	
**Պատմութիւն Հայոց		»	«		7	
Ընդհ. Պատմութիւն Հատ. Ա.		»	«	Բ	» 5	
»	»	» Բ	»	«	Բ	» 6
»	»	» Գ	»	«		10
Աղօթաբանութիւն աղջկանց			«			4
Առտնին Տնտեսութիւն			»	«		6
Բանալի հայ շարադրութեան			»	»	Բ	» 5
Պատմ. բնական գիտութեան			»	»		5
*Հովուական Աստուածաբանութիւն			Տ. Մ. Մուրատեան			10
*Պատմութիւն Բրիստոնէական Եկեղեցւոյ				»		15
*Նոաճայլ երգեցողութիւն Ս. Պատարագի հայկական նայնագրութեամբ Լեւոն Զիլինկիրեան						2
Ուսումն քրիստոնէական	Ա. Վարժապետեան				Ձնկ՝ 2 կ՝	2 ½
Այբբենարան ընթերցարան պատկ.	Ի. Աւագեանեան					
ուռճկանոց տղայոց համար						1
Քառատրան Ծուռն-հայ աշխարհի	Նուպարեան				լ՝ Բդ՝	50
					լ՝	60
					կ՝ Բդ՝	65
					կ՝ լ՝	70

ԿՐԿՆԱՏՈՄԱՐ ՈՒԹ ԴԱՍՈՎ

Ն. ՏԻՒԶԻՆՅԵԱՆ

Տպագր. Ն. Պերպերեան Կ. Պոլիս

Գին 6 դրուշ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐՔԻ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆ

Կ. Պոլիս Տպագր. Պերպէրեան 1899

ԳԻՆ **10** ԴՐՇ.

Գրաւուհս ընդունած է.

ՆՈՐ ՓԵՐԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ. Դ. Թերզեան, *ի պէտս Հանուանողաց: Ուսումնական խորհրդոյ կրթական ծրագրին համաձայն և մանկավարժական նորագոյն սկզբունքներու համեմատ պատրաստուած: Գ տպագր. 1899 Կ. Պոլիս սեպհականութիւն Պալենց դրատան: գին 60 փարայ:*

ՆԱԽԱՏԱՐԵՐՔ ՐՆԴԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԳՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ևեովք Թէյեան Բ. *մաս 9–10 տարեկան աղջ համար բնական գիտութիւնք տպագր. Յ. Մատթեոսեան 1899 գին 5 դրուշ:*

ՄԱՆՉ ՏՂՈՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՀԴԱՍՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ (գիշտրիւն) *խոտը առ ծնողս և դաստիարակս, մարզ. Գերմանեերէնէ. տպագր. Յ. Մատթեոսեան 1899 գին 2 դրուշ:*

ՄԵԾ ԴԵՐՁ ԿԱՏՈՒՆ

ԹԻՒ 37

ՕՍՄԱՆ ՉԱՏԻՔ ԽԱՆ, ՎԵՐԻ ՅԱՐԿ

Պատիւ ունիմ յայտարարել Պատ. Հասարակութեան և մանաւանդ իմ բազմաթիւ Արգոյ յաճախորդներուս, թէ ուրախ եմ այս անգամ իրենց կարենալ իմացունելուս հետևեալ կարգադրութիւններս, որով անտարակոյս պիտի յաջողիմ աւելի շատ գոհացնել ինձ դիմողներն։

1ո Կատարելագործած եմ իմ ձևագիտութիւն՝ անգլիական նորաձևութեան հետևելով։

2ո Աշխատասրներուս մէջ մանաւանդ փոփոխութիւններ ըրած եմ, փոքրամասն նոր վարպետներ առնելով։

3ո Կատարեալ ուղղութիւն և ճշդութիւն դերձակատան հիմնական սկզբունքներն են, հետևաբար ո և է խնամք պիտի չզլացուի յաճախորդներուս յանձնելու համար ճաշակաւոր և տոկուն ղեհասներ, և ներկայացնելու անգլիական ղեհասեղէնի նիմեր, որոնք մինչև ժամանակ պիտի չափարտութեան կրնան՝ վստահ եմ թէ անմրցելի պիտի լինին։

Ջերմապէս կը յանձնարարեմ ճաշակի սէր անձանց գալ և փորձել դերձակատունս։

14 — 24

ՊՕՂՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՍԱՄՈՍԻ ԳՕՆԵԱՔ

Տիամանթիսի Անտրիքիսի և Ընկ. Սամոսի մէջ վիակ դործարանի միջոցաւ մուսքաթ գինիէ խնամով պատրաստուած խիստ համեղ և անարատ վէրջէն անքամ քաղցր ե հոտակաըռնեան բժշկական կոճղերեն բաւ ե անդամ մը փորձել։

ՊԱԼԳԱՆԻ ԳԻՆԻ

Գաղիական դինիներու ճոխակաւ պատրաստուած անարատ և դուտ առանց ջուր (սլչի) և խիստ թևեվ։

VIN D'OR MUSCAT

Ամենաշնիւ դինի մը մուսքաթէ ի մասնաւորի պատրաստուած, խիստ համեղ և փափկաճաշակ անձերու համար կը յանձնարարուի, ընթրիքի հետ վոխան շամբանեայի։

ԳԱՐԵԶՈՒՐ ՊՕՄՕՆԹԻ

Ընտանեաց դործածութեան համար ամենեն օգտաւէտն, յանձնարարեալ Պոլսոյ և Զմիւռնիոյ առաջնակարդ բժիշկներէն, կը մատակարարվի ձիւ մայրերու համար։

ԱՐԹԻՒՐ Ս. ՄՍՐԵԱՆ

Գլաթայ Թոպ (Բաւոջ Քէնթրան)

Հայոցդլ համար կեդրոնատեղի Շէրմանեան Եղբարք։

կը դանուի նաև ամեն նպարավաճառներու քով։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՄԱՄՈՒԼԱՅ

Ամեն ան[ձ] որ կ'փափաքի բաժանորդագրուիլ Ա. Մամուլեան կարող են դիմել ադդակի խմբագրատեղւոյն կամ մեր Մեծ. Թաղթակցաց։

Ի պատուիրելն մեր բաժանորդաց կ'ծանուցանենք թէ խմբագրատեղւոյն ադդակի իրենց բերքերն առնցող բաժանորդք պարտաւոր են իրենց բաժնեկիցն՝ ադդակի եւ կանխիկ՝ դրկել խմբագրատեղւոյն։

Հասցէ

Ա. Մամուրեան — ԻԶՄԻՐ
M. Mamourian — Smyrne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

24	թիւ	Բաղաքին համար դրշ. արժ.		**70**
24	»	Արտասահման	»	» **80** կամ **12** Ֆր.
12	»	Բաղաքին	»	» **40**
12	»	Արտասահման	»	» **40** կամ **8** ½ Ֆր.
24	»	Դասատուաց	»	» **60** կամ **13** Ֆր.

Դասատուաց համար վճարումեայ չընդունիմք։

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

ԿՊՕԼԻՍ —	Մեծ. Սմբատ էֆ. Գաւրիէլեան. Գազաակէր խան թիւ 16 պաճնէ գաֆէսու
ԷՕՏԷՄԻՇ —	Մեծ. Տիրան էֆ. Պէնեէրլեան
ԱՒԱՄՈՆ —	Մեծ. Եղուարդ էֆ. Մուրատեան
ԵՐԻՋԱ —	Մեծ. Տիգրան էֆ. Ֆէր Պետրոսեան
ԳԱՀԻՐԷ —	Մեծ. կարապետ էֆ. Դաւուտօղլեան
ՄԱՆՉՈՒՔՐ —	Մեծ. Տիգրան վարպետեան
ՊՕՍՓՕՐ —	Մեծ. Տիգրան Թոշճեան
ԴԱՒՐԻՃ —	Մեծ. Տօմ. Փաչաեան
ԱՏԱՆԱ —	Մեծ. Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան
ՀԱԼԷՊ —	Մեծ. Յովհաննէս էֆ. Թիւրապեան
ԹՕՏՈՒՓՕ —	Մեծ. Դշան էֆ. Ժամագործեան
ՀՈՓԼՈՒ —	Մեծ. Աբրահամ էֆ. Հայրիկեան
ԱՄԱՍԻԱ —	Մեծ. Թորոս էֆ. Օմանեան
ՆԻՒ-ԵՕՐՔ —	Մեծ Գաւիթ Տ Յ. Մխիտարեան
ԿԻՐԱՒՕՆ —	Մեծ. Գալ ուտա էֆ. Գ. Խանչեան

ՓՆՏՌԵՑԵՔ ՈՒ ԴՈՒՔ ԱԼ ՓՈՐՁԵՑԵՔ

Մասնագետ ՏԻԳՐՈՒՐ ՔՕՉԻ

ԱՃԱՌՐ.— Անուշ հոտերով՝ մորթը կը կակղցնէ, առանց թեփոտելու կը գանուի. Միւսիւ Արեւիրօրուլոսի դեղարանը— Շիչէ ճիներու վրչ Նուսուֆի փէրհանէի կից.— Պրն. Յակոբ Ս Մարութեանի քով, Ֆրանկաց թաղ Սրօսթիի փէրհանէն թիւ 21։ Պրք. Դ. և Շ. Շէրիամեանց մեներանոցը – Հայոց թաղը. Րչէտաիէ ճատաէսի։

Աչխատասիրաց ընկերութեան քով (Մանկանց պարակի չահուն Փարախաչ։)

Պր. Պետրոս Ալիքսանեանի պազարը. Փարաչիօ։

ԿՈՇԻԿԻ ՆԵՐԿԸ *.— Երկու սեռի ան կոչինները կը նորցնէ, երկարատև փայլուցուլքով՝ առանց վնասելու կամ ճեղքրտելու կաչին։ կը գանուի.

Պր. Արժենակ Մինասեանի դրասենեակը. Միւրիդ էլամ օղլու խան։

Պ. Ամմա Պօղոս Օհաննեանի գործարանատեղին. Շահէն խանի կից։

Հաֆըզ Սապրի Ահմէտ պէյի մներանոցը. Կատավարութեան դրան մեծ ճէտտան։

Իսկ Փարախաչ ու Դորաչիօ վերոյիչեալ տեղերը։

---

*Գործ. կերպ.— Կոշիկը ցեխաւոր ու փոշիէ մաքրելէ ետքը չիչիի մէջ իսխուած արուճիով թեթեւ ու հաւասարապէս խո-